ԹՈՐՈՆԹՈՀԱՅ
TORONTOHYE

ԺԱ. Տարի Թիւ 9 (129), ՅՈՒԼԻՍ 2016
Մշակութային, Ընկերային, Այլազան Պարբերաթերթ

Volume 11, No. 9 (129), JULY 2016
Toronto Armenian Community Newspaper

Ֆրանսայի Խորհրդարանը Քրէականացուց Ցեղասպանութեան Ուրացումը

Ֆրանսայի Ազգային ժողովը միաձայնութեամբ կողմ քուէարկեց Հայոց Ցեղասպանութեան ժխտումը քրէականացնող նախագիծին, որ Խորհրդարանի քննարկման ներկայացուցած էր Ֆրանսայի կառավարութիւնը: Նախագիծը Սեպտեմբերին պիտի քննարկուի Ծերակոյտի մէջ, ուր հաստատուելէն ետք կրկին պիտի վերադառնայ Ազգային ժողով՝ վերահաստատուելու համար:

Բանաձեւը մշակուած է Ֆրանսայի Սահմանադրութեան համապատասխան եւ հայ համայնքի համար ընդունելի տարբերակով: Նոր փոփոխութեամբ մէկ տարի ազատազրկում կամ 45.000 եւրոյի չափով տուգանք պիտի սահմանուի Հայոց Ցեղասպանութեան փաստը ժխտելու համար:

Նախագիծը պէտք է հաստատուի նաեւ Ծերակոյտին մէջ: Բնական է, որ Թուրքիան իր լծակներով պիտի փորձէ կանխարգիլել Ծերակոյտին կողմէ նախագիծի հաստատումը:

Յունուարին Ֆրանսայի նախագահ Ֆրանսուա Հոլլանտ կառավարութեան ներկայացուցիչներուն յանձնարարած էր առաջարկել Հայոց Ցեղասպանութեան ժխտումը քրէականացնող օրէնքի բանաձեւ մը, որ կը համապատասխանէ նաեւ Սահմանադրութեան: Հայկական կազմակերպութիւններու մասնագէտները աշխատեցան ֆրանսացի իրաւաբաններու հետ՝ հայոց համար ընդունելի եւ Սահմանադրութեան համաշունչ բանաձեւ մշակելու համար: Նախագիծը հաւասար է հակացեղասպանական եւ հակասեմական օրէնքներու բանաձեւերուն:

Օրինագիծի բանաձեւին մէջ իբրեւ ցեղասպանութեան օրինակ կը նշուի Հայոց եւ Ռուանտայի ցեղասպանութիւնները:

Համազգայինի Պարախումբի Տարեկան Ելոյթը՝ Պարը...

Էրեբունի պարախումբի անդամները կը ներկայացնեն Քալինքան, Յունիս 25-26 շաբաթավերջին Թորոնթոյի Համազգայինի թատարասրահին մէջ:

Լուսանկարը՝ Յ. Գուզուեանի

«Օգնէ Արցախին» Նուիրահաւաքով 60, 000 Տոլար Գոյացաւ Թորոնթոյի Մէջ

Յունիս 5ին, ՀՅԴ «Ս. Թէիլիրեան» կոմիտէի կազմակերպութեամբ եւ մասնակցութեամբ Հայ կեդրոնի յարկին տակ գործող բոլոր միութիւններուն, կազմակերպութիւններուն եւ հաստատութիւններուն, տեղի ունեցաւ «Օգնէ Արցախին» զօրակցական դրամահաւաք Հայ Կեդրոնի սրահին մէջ՝ ներկայութեամբ շուրջ 300 հայորդիներու:

Օրուան հանդիսավար Թամար Տօնապետեան-Գուզուեան բացումը կատարեց նախաձեռնութեան՝ հրաւիրելով ներկաները մէկ վայրկեան լռութեամբ յարգելու յիշատակը Ապրիլին Արցախի քառօրեայ պատերազմին եւ անկէ ետք զոհուած հայ զինուորներուն:

Մուտք գործեց Արցախի դրօշը ՀՄԸՄի փողերախումբի եւ թմբուկներու զարկով: Ս. Աստուածածին եկեղեցւոյ հովիւ Գեղարդ Ծր. Վրդ. Քիւսպէկեան դրօշի օրհնութիւնը կատարեց, որմէ ետք երգուեցաւ Արցախի քայլերգը կատարողութեամբ՝ Լենա Պէյլէրեանի:

Հանդիսավարի բացման խօսքէն ետք, Հայր Սուրբը կատարեց յորդորանքի եւ օրհնութեան խօսք, որուն յաջորդեց գեղարուեստական կոկիկ յայտագիր մը՝ մասնակցութեամբ ՀՕՄի վարժարանի աշակերտներուն: Տեղի ունեցաւ Արցախին ձօնուած երկու երգերու խտասալիկի ցուցադրութիւն, Համազգայինի Էրեբունի պարախումբը կատարեց «Վաղարշապատ» պարը (երաժշտութիւն՝ Խաչատուր Աւետիսեանի, բեմադրութիւն՝ Լոռի Նաճարեանի): Մեծ ապրումով ասմունքեց Տօնապետեան-Ուզուեան ներկայացնելով քերթուածներու համադրում մը Սարմէնի, Վահագն Դաւիթեանի, Համօ Սահեանի եւ Ասկերանի ծնունդ՝ Վազգէն Օվեանի: Ցուցադրուեցաւ Արցախի հեռոստատեսութեան կողմէ պատրաստուած յատուկ տեսաերիզ մը, ուր կ՚արտացոլար ՀՕՄի բարեսիրական գործունէութիւնը Արցախի մէջ:

ՀՄԸՄի թմբկահարները

Յակոբ Ճանպազեան

Թամար Տօնապետեան

Գեղարդ Ծայր. Վրդ. Քիւսփէկեան

ՀՅԴ «Ս. Թէիլիրեան» կոմիտէի հերթապահ Յակոբ Ճանպազեան փոխանձեց օրուան պատգամ ու յորդորը, որմէ ետք ներկայացուց ՀՅԴ Արցախի ԿԿ - ներկայացուցիչ եւ Արցախի Ազգային ժողովի պատգամաւոր Դաւիթ Իշխանեանը, որուն հետ ուղիղ եթերով կարելի եղաւ կապուիլ եւ ունկնդրել անոր զեկոյցը Արցախի ներկայ իրավիճակին մասին: Ան նաեւ պատասխասեց ներկաներու կարգ

շար. տես. էջ 29

Your Home will advertise worldwide 24/7 untill it's Sold
Hratch & Alex
Melconian
RE/MAX
Broker & Sales Representative
Call us today
for builders
pre construction
Condo and home
packages
office: 416.494.7653
Direct: 416.417.5626
TorontoRealEstateGTA.com
Remax, Hallmark Realty Ltd, Brokerage
RE/MAX
SOLD
RE/MAX
Harry & Alex
Melconian
RE/MAX 416-494-7653
www.TorontoRealEstateGTA.com
Տուներուն եւ Կալուածներուն համար դիմեցէք մեզ
Serving our Community over 25 years

Altima Tours
& Charters Ltd.
Եռօրեայ Պտոյտ
դէպի Quebec City
եւ
Sainte Anne-de-Beaupré
Օգոստոս 6-7-8, 2016
Մանրամասնութեանց համար դիմել՝
Բեննա Թարգիի
Հեռ. 416-494-4067
office 416-496-0606

Հ.Մ.Ը.Մ. Թորոնթո Տարեկան Դաշտագնացութիւն
Հ.Մ.Ը.Մ.
Annual Picnic
Sunday, August 7th 2016 - starting at 11am
Have Fun with Family & Friends
& Support Homenetmen
Համեղ Ճաշեր • Ուրախ Ժամանց
Պլոթի և Ճատրակի Մրցաշարք
Great Food & Drinks!
Swimming Pool
Chess Tournament
Blot Tournament
Bring your own chairs!!
HOLIDAY GARDENS
3315 Balsam Road (Sideline 4), Pickering, L1X 2W6

«Պարը...» Պանծալի ելոյթը

Թամար Տօնապետեան Գուզուեան

Պահեր կան, որ երբ փորձենք նկարագրել, կ'անդրադառնանք թէ ինչ ածական որ գործածենք միեւնոյնն է. խօսքերը չեն համեմատիր այն զգացումին, որ կը պատէ հանդիսատեսը: Արդարեւ, պէտք է ապրիլ այդ պահերը, ըմբռնելու համար իրենց ազդեցութիւնը: Այդպիսին էր Յունիս 25-26 2016 շաբաթավերջին, Թորոնթոյի Հայ Երիտասարդական Կեդրոնի «Համազգային» թատերասրահին մէջ, երկու օրերու վրայ 900է աւելի հանդիսատեսներու առջեւ ներկայացուած Համազգայինի Պարարուեստի Ուսումնարանի եւ Էրեբունի Պարախումբի «Պարը...» տարեկան ելոյթը, որ իր այլազանութեամբ, տարազներու հարստութեամբ, իւրայատուկ բեմականացումով ու գերազանց որակով՝ Թորոնթոյի հայ գաղութի պատմութեան էջերուն մէջ ընդհանրապէս եւ Համազգայինի Գլաձոր մասնաճիւղի յուշամատեանի էջերուն մէջ յատկապէս՝ իր որոշիչ տեղը պիտի գրաւէ անկասկած: Յայտագիր՝ որ հպարտութեան զգացումներով ողողեց մեր հոգիները: Յայտագիր՝ որուն «Պոյ Պոյ Մկնիկ»ով մանկացանք, «Յուշեր»ով վերացանք, «Արտաշատ»ով զօրացանք, «Քալինքա»ով հեռուները սաւառնեցանք, ու «Քոչարի»ով վերադարձանք մեր յաւիտենական խարիսխը՝ հայրենիք:

Վարագոյրին ետեւ՝ սուսիկ-փուսիկ, մազերը վեր հաւաքուած, ժպիտը դէմքերուն, աչքերը լայն բացած ու անհամբեր՝ շարուած են Համազգայինի Պարարուեստի Ուսումնարանի Գ եւ Դ խումբերու փոքրիկները. ցուցամատիկները իրենց շրթունքներուն՝ ասդին անդին կը դարձնեն գլուխները, զիրար դիտելով, հետեւելով պատասխանատուներուն՝ որոնք հոգատար կը հսկեն: Ու ահա, երաժշտութեան ձայնը հազիւ հնչած՝ պզտիկ ու արագ քայլերով կը վազեն բեմահարթակին վրայ, իրենց մարզանքի գորգերը ձօձելով: Դասապահերէն մէկն է որ հանրութեան կը ներկայացուի. մուտք կը գործէ պարուսոյցը, ուշադիր կը հետեւի բոլորին, ցուցմունքներով կը ճշդէ իրենց քայլերը ու ապա՝ Համազգայինի «Էրեբունի» Պարախումբի անդամներուն հետ միատեղ, երաժշտութեան ներքեւ, պարուսոյցին հետեւելով, մարզանքներու ու պարի շարժումներուն ընդմէջէն փոքր ու մեծ՝ հանդիսատեսին առջեւ կը պարզեն Համազգայինի Պարարուեստի Ուսումնարանի ու Էրեբունի Պարախումբի փորձերէն յիշատակելի պահեր. քայլեր՝ որոնց առաջնորդը վեց տարիներէ ի վեր գեղարուեստական ղեկավար եւ պարուսոյց՝ Լոռի Նաճարեանն է:

Ու ահա, «Հայաստան» (Մենք ենք մեր սարերը) երգը կը հնչէ ու բեմին երկու կողմերէն մուտք կը գործեն Ուսումնարանի պատանիները, ծայր տալով Ելոյթի Ա. մասին: Այնքան խանդավառ են պարողները. վառ այտերով, համաչափ քայլերով, ձեռք ձեռքի տալով տօնախմբութիւն մը կարծես կը ստեղծեն սրահէն ներս, արժանանալով բուռն ծափերու: Ապա, առանց վայրկեան իսկ կորսցնելու, յաջորդ պարին կ'անցնինք: Մայր մուկը (Կարին Մաթոսեան) բեմին կեդրոնը կը յայտնուի ու հետաքրքրութեամբ շուրջը կը դիտէ, մինչ մկնիկները (փոքրերու բ. խումբը) իրենց երկար պոչերը աջ ու ձախ տարուբերելով կը սկսին իրերայաջորդ քայլերով երեւիլ լոյսին տակ: «Պոյ-պոյ մկնիկ»ն է. պաստառին վրայ համապատասխան շարժուն նկարները լրացուցիչ պատկեր մը կազմեն ու կը շարունակուի մուկերուն խաղն ու խանդավառութիւնը մինչեւ որ վրայ հասնին կատուները (Ատրինէ Արթին եւ Թիթեռ Քարկոցեան): Մանուկներու աշխարհէն կը փոխադրուինք հերոսական Արցախ. թաւշեայ կապոյտ ու արծաթագոյն տարազներով՝ «Գիւլիմ ջան»ի տղաքն են («Էրեբունի» պարախումբ), որոնց ուս-ուսի ու հաստատ քայլերը կը դրսեւորեն Արցախի ժողովուրդին հաստատակամութիւնը. մենակատարը՝ պարուսոյց Լոռի Նաճարեան, հպարտ քայլուածքով ու շքեղ զգեստով կը գրաւէ բոլորին ուշադրութիւնը:

Յաջորդին՝ «Էնզելի»ին մէջ, պատանի աղջիկները ուշադրութիւն կը գրաւեն իրենց համաչափութեամբ, նազանքով, ու վառվռուն տարազներով. իրենց խմբային շարժումներով մեզ ալիքներու վրայ օրօրելէ ետք, կը փոխադրեն դէպի սիրոյ կապոյտ աշխարհը: «Յուշեր»ը անցեալի յուշեր արթնցնելէ անդին՝ նոր յուշերու ծայր կու տայ. պահ մը կարծես Տէրեանի «Մթնշաղի անուրջներ»ուն մէջ ենք, ուր սահուն քայլերով մուտք կը գործեն «Էրեբունի»ի հեզաձկուն աղջիկները: Պարզ երկնքի կապոյտին մէջ ողողուն՝ պարիկի նման հագած, պսպղուն գլխու զարդով ու այնքան նազանքով ու թեթեւ կը սահին, կարծես օդին մէջ ըլլային: Մենակատար՝ Մարիա Մարտիրոսեանի նրբահիւս շարժումները գրաւիչ են:

Պատանի «Կռունկներ»ը իրենց համաչափ երամներուն մէջ կ'առնեն մեզ ու ժամացոյցի սլաքները յետ յետ դարձնելով մենք մեզ կը գտնենք աւանդութեան գիրկը՝ «Իլիկներ»ու խանդավառ պարով, կատարողութեամբ՝ Էրեբունիի աղջիկներուն, որմէ անմիջապէս ետք, «Ազգագրական Պար»ի եռանդուն շարժումները մեծ խանդավառութիւն կը ստեղծեն սրահէն ներս: Էջը կը դարձնենք. բեմի վրայ է «Վաղարշապատ»ի եռեակը (Շաբաթ՝ Մեղեդի Կոստանեան, Մելինա Գալթակեան, Դուին Գարաճեան. Կիրակի՝ Սարին Չարշաֆեան, Մարինա Գալուստեան, Կարին Մաթոսեան): Փակագիծ մը բանալով նշենք, որ իւրաքանչիւր պարի ետին, պաստառին վրայ կը ցուցադրուին համապատասխան նկարներ, որոնք ալ աւելի կը հարստացնեն ընդհանուր ելոյթը: Իսկ յայտագրին ընթացքին տեղ-տեղ ցուցադրուող կարճ տեսերիզները, որոնք համադրուած են Արմէն Գարօ Մելքոնեանի եւ Արթուր Գրիգորեանի կողմէ, կը դրսեւորեն պարողներուն զգացումներն ու տպաւորութիւնը պարի հանդէպ, թէ ինչ կը նշանակէ պարը իւրաքանչիւրին համար:

«Հայաստանը իմն է» փոքրերու Ա. Խումբի անդամները իրենց հաստատ, հպարտ քայլուածքով՝ փոքր զինուորներ ըլլային կարծես: Սարդարապատի յուշակոթողն է պաստառին վրայ. ծառերուն մէջէն՝ եռագոյնը բարձր կը ծածանի ու ահա Էրեբունիի «Հայկազուններ»ը բեմահարթակին վրայ են. հիանալի համաչափութիւն, կենսունակութիւն. մեր ազատագրական պայքարի մարտունակ ոգին է, որ կը դրսեւորուի այս պարին ընդմէջէն եւ այդ ոգին գրկած կը հասնինք Հայաստան: Ձեռքերը օդն են, ոտքի զարկերը հաստատ, ծափերը անպակաս... «Հայաստանի երգը» համախմբած է մեծն ու փոքրը, շքեղ տեսարան մը պարզելով մեր աչքերուն առջեւ:

Ելոյթին Բ. մասը ծայր կ'առնէ ռուսական նշանաւոր «Քալինքա»ով. պսպղուն տարազները, Էրեբունիի տղոց անթերի թռիչքներն ու աղջիկներուն ոլորապտոյտը մեծապէս կը տպաւորեն ներկաները, մանաւանդ՝ ռուս հանդիսատեսներ, որոնք գովասանքով կ'արտայայտուին աւարտին:

Պաստառին վրայ՝ Միջերկրականի կապոյտն ու ձերմակ պատերով տունները մեզ կը փոխադրեն յոյներու երկիրը. Օփա՜... կը հնչէ «Սիրթաքի»ն: Մեծ աղ-

շար. տես. էջ 14

Լուսանկարները Յ. Գուզուեանի

Հայաստանի երգը . Ա մասի փակում

Յուշերը՝ Էրեբունիի կատարողութեամբ. մենակատար՝ Մարիա Մարտիրոսեան

Էնզելի. Ուսումնարանի մեծեր

Կռունկներ . Պատանիներ

Պոյ Պոյ Մկնիկը. Փոքրեր Բ խումբ

Առաջնորդ Բաբգէն Արք. Չարեան ժամանեց Գանատա

Առաջնորդ Բաբգէն Արք. Չարեան Թորոնթոյի Հայ Կեդրոնին առջեւ կը դիմաւորուի աւանդական աղ ու հացով:

Յունիս 9ի երեկոյեան, Գանատայի Հայոց Թեմի նորընտիր Թեմական Առաջնորդ Բաբգէն Սրբ. Արք. Չարեան ժամանեց Մոնթրէալի Փիէր Թրուտօ օդակայանը:

Առաջնորդ Սրբազան Հօր դիմաւորող շքախումբին մաս կը կազմէին՝ Գանատայի Հայոց Թեմի Հայրապետական Ներակայացուցիչ՝ Սուրէն Սրբ. Արք. Գաթարոյեան, Ազգային Վարչութեան ատենապետ Գրիգոր Տէր Ղազարեան, Կրօնական ու Ազգային Վարչութեան Ժողովներու ներկայացուցիչները, Գանատայի տարածքին ծառայող հոգեւորականաց դասը, Առաջնորդարանի Դիւանապետուհին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Կեդրոնական Վարչութեան անդամ Տոքթ. Ժիրայր Պասմաճեան, ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեան, ՀՅԴ Կեդրոնական Կոմիտէի ատենապետ Ռաֆֆի Տօնապետեան, «Հորիզոն» շաբաթաթերթի վարիչ խմբագիր՝ Վահագն Գարագաշեան, Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ եւ Ս. Գէորգ Հայց. Առաքելական եկեղեցւոյ Հոգաբարձութեանց ներկայացուցիչները, եւ Մոնթրէալի ու Լաւալի Կոմիտէներու ներկայացուցիչները:

Առաջնորդը շքախումբին հետ առաջնորդուեցաւ դէպի Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցի, ուր կատարեց առանձնական աղօթք: Իսկ երեկոյեան Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ մէջ տեղի ունենաւ «Հրաշափառ»ի արարողութիւն:

Առաջնորդ Սրբազան Հօր Այցելութիւնը՝ Թորոնթօ

Առաջնորդ Սրբազան Հայրը Թորոնթոյի հայ հոգեւոր պետերուն հետ:

Յունիս 26ին, Առաջնորդ Բաբգէն Արք. Չարեան ժամանեց Թորոնթօ: Ան այցելեց Հայ Կեդրոն, ընկերակցութեամբ՝ Գեղարդ Ծ. Վրդ. Քիւսպէկեանի եւ Կոմիտաս աւգ. քհն. Փանոսեանի, ուր դիմաւորուեցաւ Հ.Յ.Դ. «Սողոմոն Թեհլիրեան» կոմիտէի ատենապետ՝ Յակոբ Ճանպազեանի կողմէ: Ապա, Սրբազան Հայրը այցելեց ՀՕՄի ամէնօրեայ վարժարան, ուր զինք դիմաւորեց վարժարանի տնօրէն՝ Տոքթ. Արմէն Մարտիրոսեան: Սրբազան Հայրը ծանօթացման հանդիպում մը ունեցաւ նաեւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգաբարձութեան կազմին հետ: Հոգաբարձութեան ատենապետ՝ Տոքթ. Ռազմիկ Պէպէճեան սպառիչ բացատրութիւններ տուաւ եկեղեցւոյ կեանքին եւ գործունէութեան մասին:

Յունիս 28ին, Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ գտնուեցաւ եկեղեցւոյ աղօթասէր խումբի աղօթքի պահուան, եւ այդ առթիւ կատարեց օրուան խորհրդածութիւնը, ապա՝մտերիմ զրոյցի պահմը ունեցաւ Երէցներուն հետ, հիւրասիրութեան շուրջ: Երեկոյեան Սրբազան Հայրը հանդիպումներ ունեցաւ՝ Ազգ. Երեսփոխաններուն եւ եկեղեցւոյ հիմնադիր կնքահայրներուն հետ:

29 Յունիսին, Առաջնորդ Սրբազանը Ս. Աստուածածին Եկեղեցւոյ «Յովնանեան» սրահին մէջ ընդունեց Հայ Կեդրոնի բոլոր մարմիններու վարչութիւնները, ներկայութեամբ Հոգեւոր Հայրերուն եւ Ազգ. Վարչութեան եւ հոգաբարձութեան ներկայացուցիչներուն: Սրբազան Հայրը շեշտեց միասնական աշխատանքին անհրաժեշտութիւնը, որպէս մէկ ընտանիք, միակ եւ նոյն նպատակ մը համար գործող:

30 Յունիսին, ան ընդունեց Միջ-Յարանուանական յանձնախումբը: Ներկայ էին յանձնախումբի ներկայացուցիչ՝ տիար Յակոբ Ճամպազեան, Երրորդութիւն եկեղեցւոյ հովիւ եւ Էջմիածնական Թեմի Առաջնորդական փոխանորդ՝ Զարեհ Աւգ. Քհն. Զարգարեան, Թորոնթոյի Հայ Կաթողկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ

շար. տես. էջ 29

Դիւցազներգութիւնը՝ մեր անգիր ու գրաւոր բանահիւսութեան մէջ

Համազգայինի Գլաձոր մասնաճիւղի Գրական յանձնախումբին կողմէ հինգ տարիներէ ի վեր կանոնաւոր հերթականութեամբ կազմակերպուած այս հաւաքները կը հետապնդեն հայ երիտասարդը հայ գրականութեան մօտեցնելու ազգօտուտ նպատակը: Ամսական դրութեամբ, խմբային թէ անհատական ներկայացումներու միջոցով, հաւաքները կրցած են համախմբել երբեմն հարիւրի հասնող, երբեմն աւելի նուազ թիւով գրասէրներ ու իրենց առջեւ բանալ հայ գրականութեան փառահեղ էջերը. էջեր՝ որոնք այլապէս, մեծ մասամբ գոց պիտի մնային մանաւանդ՝ երիտասարդ ներկայացնողներուն առջեւ....:

Դիւցազներգութիւնը իբր նիւթ ունենալով՝ 19 Յունիսի հաւաքը ընտիր ամփոփում մըն էր անգիր բանահիւսութենէն՝ Վահագնի ծնունդէն մինչ մեր գերագոյն դիւցազներգութիւնը՝ Սասունցի Դաւիթը, անցնելով զարթօնքի սերունդէն, գեղապաշտ սերունդի տիտաններէն, մեր ազատագրական պայքարի ճամբէն ու հասնելով հերոսական Արցախ: Փաստօրէն, հայոց պատմութիւնը ինքնին կարելի է համարել դիւցազնութիւններու շարան մը՝ անցեալէն մինչ ներկան ու տակաւին՝ լուսաճաճանչ ապագան, որուն մասին շատ երկար կարելի է զրուցել:

Նախքան յայտագրին ընթացք տալը, հանդիսավարը՝ Մեղեդի Էթիեմեզեան, կը հրաւիրէ Համազգայինի Գանատայի շրջանային վարչութենէն՝ Սօսի Թաշճեան, վարչութեան կազմակերպած գրական մրցոյթի Թորոնթոյի մրցանակները բաշխելու համար: Այսպէս՝ նախակրթարան բաժնի Ա մրցանակը կը ստանայ Սոլէյ Ապտալեան իսկ բ. Մրցանակը կը ստանայ Սյուզի Գյունաշյան. երկուքն ալ ՀՕՄի Ամէնօրեայ վարժարանէն: Ապա կ'անցնինք յայտագրի գործադրութեան: Գրական յանձնախումբէն պրն. Մուշեղ Գարագաշեան հմուտ կերպով մեր առջեւ կը պարզէ հայ դիւցազներգութենէն օրինակներ, անգիր բանահիւսութենէն մինչ մեր օրերը, յատուկ բացատրականներ տալով : Կը յաջորդէ Գրասէրներու խմբակի նորագոյն անդամ՝ Տոքթ. Ռազմիկ Պէպէճեանը, որուն ներկայացումը կը կեդրոնանայ դիւցազներգակ բանաստեղծ՝ Սիամանթոյի վրայ: Ռազմիկ Սիամանթոյի գործերէն լաւապէս համադրուած գեղեցիկ փունջ մը կը ներկայացնէ, ինչպէս՝ «Քնարիս լարերը դեռ թաց են» եւ «Ափ մը մոխիր», անդրադառնալով Սիամանթոյի գրական արժանիքներուն եւ կենսագրական գիծերուն:

Ռազմիկին կը յաջորդէ Արփի Ագըլեանը, որուն ընտրած նիւթը Դանիէլ Վարուժանն է. Արփի Վարուժանի մասին հակիրճ կենսագրական մը տալէ ետք, կ'արտասանէ իր նախասիրածներէն՝ «Ձօն»ը, Վարուժանի խորիմաստ գոհարներէն մին: Մեր դիւցազներգութեան կարեւոր մասերէն մին ազգային յեղափոխական երգերն են, որոնք կը բխին առաւելաբար ժողովուրդէն եւ իրենց մէջ կը պարունակեն մեր ազատագրական պայքարի պատմութիւնն ու ոգին: Խմբակի անդամներէն՝ Տարօն Հալաճեան տպաւորիչ ձայնով կ'երգէ «Թիփի բորան...» յեղափոխաշունչ երգը ու կարգը կը հասնի Կոստան Զարեանի: Ռուպինա Սարգիսեան կը ներկայացնէ Զարեանի կեանքին մասին, հետաքրքրական գիտելիքներ բաժնելով ներկաներուն հետ, օրինակ՝ Զարեանի հայերէն սորվիլը, բարձր հասակին: Ապա, Ռուպինա մաս առ մաս կը ներկայացնէ Զարեանի գլխաւոր գործերէն՝ «Տատրագոմի հարսը», իւրաքանչիւր գլուխէ հատուածներ կարդալով եւ բացատրականներ փոխանցելով ներկաներուն: Զարեանէն կ'անցնինք դէպի հերոսական Արցախ. Լանա Տէր Պետրոսեան կ'ասմունքէ Ասկերանի ծնունդ՝ Վազգէն Օվեանի (1937-1987) գործերէն երկուքը՝ «Հիմի էլ լռենք»ն ու «Ղարաբաղ»ը արժանանալով բարձր գնահատանքի: Պահը կը հասնի որ փակենք հաւաքը. Տարօն Հալաճեան ապրումով կ'երգէ «Հայ հերոսների երգը», որուն կը ձայնակցին շատեր: Աւարտին, հանդիսավարը կը շնորհաւորէ բոլոր հայրերը հայրերու տօնին առիթով եւ գիրքերու օրինակներ կը յանձնէ բոլոր մասնակցողներուն. խանդավառուած հաւաքին մթնոլորտէն, Խմբակին կը միանայ Տոքթ. Գրիգոր Պէպէճեան:

Օնթարիոյի Գանատահայ Բժշկական Ընկերակցութիւնը (ACMAO) Արցախի Համար Հանգանակութիւն կը Կազմակերպէ

Տոքթ. Անի Հասըրճեան

Յունիս 3ին, կազմակերպութեամբ Օնթարիոյի Գանատահայ Բժշկական Ընկերակցութեան, տեղի ունեցաւ Արցախի համար Զօրակցական Հանգանակային Հաւաք, Թորոնթոյի Լարա Ճաշարանին մէջ:

Ճաշարանի մուտքէն սկսեալ Արցախ խորհրդանշող յատկանշական իրերով զարդարուած էր սրահը: Հաւաքին թէման էր «Հայեր Միացէք, Միացէք Հայեր, Արցախն է մեզ կանչում, Օգնութեան հասէք...»:

Ընկերակցութեան ատենապետ, օրուայ հանդիսավար՝ Տոքթ. Սիրիլ Թահթաճեանի բարի գալուստի խօսքով սկսաւ Քոքթէյլ երեկոյթը: Ան անդրադարձաւ Ընկերակցութեան մարդասիրական աշխատանքին մասին, որ տեղի ունեցած է անցնող երկու տասնամեակներուն Արցախի մէջ, ACMAOի նախաձեռնութեամբ եւ Թորոնթոհայ գաղութի մասնակցութեամբ:

Օրուայ պատգամաբերն էր Ընկերակցութեան վարչական անդամ՝ Տոքթ. Գայանէ Հովհաննիսեան, որ մանրամասնօրէն ներկայացուց հրատապ եւ Արցախի շտապ օգնութիւն հասցնելու անհրաժեշտութիւնը՝ ըսելով. «Ապրիլի սկիզբը Ատրպէյճան յանկարծակի լայնածաւալ յարձակում կատարեց Արցախի վրայ՝ ամբողջ սահմանի երկայնքով, որ փաստացի պատերազմի բնոյթ ունէր: Այս պատերազմը աւարտուեց երկու կողմից մեծ մարդկային կորուստներով: Հայկական կողմը 90ից աւելի զոհեր տուեց, 100ից աւելի վիրաւորներ: Այս զինուորների մեծմասնութիւնը18-20 տարեկան տղաներ էին, որոնք պարտադիր զինուորական ծառայութիւն էին անցկացնում Արցախի սահմանամերձ շրջաններում: Վիրաւորներ եւ զոհուածներ եղան նաեւ խաղաղ բնակչութեան շրջանում:

«Ամբողջի աշխարի հայութիւնը ոտքի կանգնեց Արցախին օգնութիւն հասցնելու համար: Գանատայի Հայկական Միութիւնները անմասն չմնացին: Հայկական Բշժկական Ընկերակցութիւնը, որը արդէն 20 տարուց ի վեր Արցախում բժշկական ծրագրեր է իրականացնում, կազկամերպեց դրամահաւաք եւ հաւաքուած ամբողջ գումարը կ'օգտագործուի Արցախին բժշկական օգնութիւն ուղղարկելու համար:

«Այսքան մեծաքանակ զոհերի առկայութիւնը Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի հայերի շրջանում բարձրացրեցին շատ արդիական եւ ցաւոտ հարցեր, որոնց մէջ նաեւ բժշկական օգնութեան փաստացի անկատար վիճակի վերաբերեալ՝ սկսած զինուորների առաջին անհրաժեշտութեան պարագաների բացակայութիւնից մինչեւ հիւանդանոցների վերակենդանացման բաժանմունքների անմխիթար վիճակը»:

Ան աւելցնելով ըսաւ, որ Ժամանակին եւ ճիշդ կազմակերպուած օգնութիւն հասցնել պարագային բազմաթիւ կեանքեր կարելի է փրկել՝ առաջին մի քանի ժամերու ընթացքին: Ատոր համար անհրաժեշտ է քաղաքացիներու պատրաստուածութիւն՝ առաջին բուժօգնութիւն ցուցաբերելու համար, շտապ բժշկական օգնութեան յաջորդ օղակը ժամակնակակից գործիքներով եւ սարքերով հագեցուած շտապ օգնութեան մեքենաներու անհրաժեշտութիւնն է, որ

վիրաւորները արագ հիւանդանոց հասցնեն: «Ցաւոք, մեր շտապ օգնութեան մեքենաները եւ կենտրոնները շատ հեռու են միջազգային չափանիշներին համապատասխանելու: Շտապ օգնութեան մեքենաների մեծ մասը հին են եւ նախատեսուած չեն ծանր վիրաւորներ տեղափոխելու համար», մատնանշեց բանախօսը:

Արցախի իրավիճակի մասին, Տոքթ. Գայանէ Հովհաննիսյանի հայերէն եւ անգլերէն լեզուներով մանրակրկիտ բացատրութիւնները շուրջ 140 ներկաներ ուշադրութեամբ ունկնդրեցին եւ առաւել չափով իրազեկ եղան Արցախի առողջապահական համակարգին եւ անոր բացթողումներուն մասին, որոնք խիստ վերանայման եւ արդիականացման կարիք ունին:

Ճաշի սպասարկութեան ընթացքին եղան անակնկալներ, որոնցմէ առաջինը Տոքթ. Անի Հասըրճեանի կատարողութեամբ «Ղարաբաղի Սիրուն Եղնիկ» հայկական նազպարն էր:

Արցախի նուիրուած այս յատուկ երեկոյի երկրորդ անակնկալը «Հայաստան» Հիմնադրամի Թորոնթոյի շրջանի ատենապետ՝ Մկրտիչ Մկրտիչեանի էր, որ Արցախէն նոր հասած էր: Ան Ղարաբաղի խրախուսիչ լուրերն ու ողջոյնները փոխանցեց ներկաներուն:

«Գետաշէն», «Ղարաբաղցի», «Պատերազմ ենք գնում», «Հզօր Հայաստան», «Հայեր Միացէք» եւ Արցախի նուիրուած յատուկ երգերով երեկոն սիրայօժար խանդավարեց Թորոնթոհայութեան բեմերուն վերջին քանի մը ամիսներուն փայլը տուող, Հալէպէն ժամանած, Աշուղական ու հայրենասիրական երգերու մեկնաբան եւ սիրուած երգիչ՝ Մհեր Մինասեան:

Օրուայ հանգանակուած մօտաւորապէս $27,000ը (Գանատական) պիտի յատկացուի Շտապ Օգնութեան Համակարգին նպաստելու:

• Luxury Living* On Bavaro Beach, Punta Cana
• Guaranteed 8% Annual Return On Investment
• Private Elevators in Each Suite
• 100m To Beach, Dining, Entertainment Free* Sheltered Parking
• Full Private Ownership*Optional Rental Program
• 5 Year Builder Comprehensive Warranty
• Deposit & Builder 100% Insured & Bonded

Reliable

Excellence at work

Raffi and Karina are a strong real estate team who work together in a partnership to serve our community in a unique and proactive manner. With a combined experience of 37 years, we offer a professional and inclusive service with your best interests in mind.
Call us today for a consultation about your real estate needs anywhere in the GTA .

RAFFI
D. BOGHOSSIAN
B.A., MVA, Broker
Market Value Appraiser - Residential
Direct: 416-419-8441
raffi.db@gmail.com
www.raffirealestate.com

ROYAL LEPAGE
Exceptional Real Estate Services
BROKERAGE INDEPENDENTLY OWNED AND OPERATED

KARINA
HANEYAN
SALES REPRESENTATIVE
Residential & Commercial Sales. Buyer and Seller
Direct: 416-419-8441
karinehaneyan@gmail.com
www.northyorkproperties.ca

100-200 Consumers Road, Toronto, ON M2J 4R4 Office: 416-497-9794 Fax: 416-497-5949

ՀՕՄի Թորոնթոյի Երկրորդական Վարժարանը Տուաւ Իր 12րդ Հունձքը

Յունիս 17ին, Թորոնթոյի Հայ Երիտասարդական Կեդրոնի «Համազգային» թատերասրահին մէջ տեղի ունեցաւ ՀՕՄի Երկրորդական Վարժարանի աւարտական հանդէսը:

Հանդիսութեան ներկայ էին Գեղարդ Ծայրագոյն վարդապետ Քիւսպէկեան, Կոմիտաս Աւագ Քահանայ Փանոսեան, Զարեհ Աւագ Քահանայ Զարգարեան, Վեր. Սերոբ Մկրտիչեան, Վարժարանի Կրթական մարմնի ատենապետ՝ Սեւակ Քիւփէլեան, տնօրէնութիւն, ուսուցչական կազմ, ծնողներ, հարազատներ, բարերարներ:

Հանդիսաւոր երաժշտութեան ներքոյ սրահ մուտք գործեցին 29 շրջանաւարտները:

Գանատայի եւ Հայաստանի օրհներգներէն ետք, անոնք գրաւեցին իրենց տեղերը բեմին վրայ: Հրաւիրուեցան 3 աշակերտներ՝ Լուսին Մովսէսեան, Քրիստափոր Հատտատ, եւ Լարա Շաւերտեան, ընթերցելու սիրելի վարժարանին ուղղուած հրաժեշտի եւ երախտիքի խօսքը, հայերէնով, անգլերէնով եւ Ֆրանսերէնով յաջորդաբար:

Անոնք իրենց ուղերձին մէջ յուզախառն երանգով շնորհակալութիւն յայտնեցին իրենց ծնողներուն եւ ուսուցիչներուն՝ հայեցի դաստիարակութեան, յարատեւ հոգատարութեան եւ լաւագոյն ուսումի համար:

Ապա բեմ հրաւիրուեցաւ Վարժարանի տնօրէն Տոքթ. Արմէն Մարտիրոսեան: Ան շնորհաւորեց ներկաները այս ուրախալի առիթով եւ շեշտեց այն փաստը, որ շրջանաւարտները լաւագոյն ձեւով պատրաստուած են իրենց կեանքի նոր հանգրուանին՝ որպէս ազնիւ հայորդիներ եւ իրենց ապրած երկրին տիպար քաղաքացիներ:

Կրթական մարմինի ատենապետ Քիւփէլեան շնորհաւորեց հանդիսականները եւ հակիրճ ձեւով ներկայացուց անցեալ ուսումնական տարուան կատարած իրենց աշխատանքները:

Ապա բեմ հրաւիրուեցան ուսուցիչները եւ կատարուեցաւ վկայականներու եւ մրցանակներու բաշխում ձեռամբ տնօրէն Ա. Մարտիրոսեանի:

Հանդիսութիւնը օրհնութեան խօսքով եւ աղօթքով փակեց Գեղարդ վարդապետ Քիւսպէկեան:

8րդ Դասարանի Աւարտական Հանդէս

Յունիս 24ի երեկոյեան, Հայ երիտասարդական կեդրոնի Համազգային թատերասրահը ուշագրաւ էր իր հոծ բազմութեամբ: ՀՕՄի Գոլոլեան վարժարանի 8րդ դասարանի աւարտական հանդէսն էր: Ներկայ էին Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներ Հայր Գեղարդ Ծ. Վրդ. Քիւսպէկեան եւ Տէր Կոմիտաս Աւագ քահանայ Փանոսեան, Հայ Աւետարանական եկեղեցւոյ հովիւ վեր. Սերոբ Մկրտիչեան, Հայ Կեդրոնի երդիքին տակ գործող միութիւններու ներկայացուցիչներ, նախկին եւ ներկայի կրթական մարմինի անդամներ, տնօրէն Արմէն Մարտիրոսեան, փոխ տնօրէն Ռաֆֆի Սարգիսեան եւ Roger Veale, ուսուցիչներ, բարերարներ, ծնողներ եւ հարազատներ:

Շրջանաւարտ 36 աշակերտներու հանդիսաւոր մուտքով եւ Գանատայի ու Հայաստանի օրհներգներով, հայերէն լեզուի ուսուցչուհի՝ Յասմիկ Պապեան, որպէս երեկոյի հանդիսավար, վարժարանի տնօրէնութեան, ուսուցչական կազմին եւ շրջանաւարտ աշակերտներուն անունով, ողջունեց ներկաները: Ան իր խօսքին մէջ շեշտեց շրջանաւարտ աշակերտներուն արձանագրած յաջողութիւնները , աւելցնելով, որ այս սովորական տարեվերջի ձեռնարկ չէ միայն, այլ բազմանդամ ընտանիքը հաւաքուած է այս հարազատ յարկին տակ միասնաբար բաժնելիք ըլլալու իւրաքանչիւր աշակերտի յաջողութեան: Հաշուետուութեան պահն է, ուր բոլոր անխուսափելի դժուարութիւնները, առօրեայի հետ կապուած փոքր հարցերը անհետացած են եւ միայն հայ պարմանպարմանուհիներու աչքերուն լոյսն է որ կ'արտացոլէ այս բեմէն: Պապեան ընդգծեց նաեւ, որ այս հանդիսութիւնը ուսումնական տարեշրջաններու կարեւոր հանգրուանի մը աւարտն ու նուաճումի մը նշումն է: Աւելի՛ն, յառաջիկայ չորս տարիներու ընթացքին ՀՕՄի երկրորդական վարժարանի աշակերտ մնալու ցանկութեան վերանորոգումն է, 12րդ դասարանի վկայականը ա՛յս յարկին տակ, ա՛յս բեմէն ստանալու հաւաստիացումն է:

Անգլերէն լեզուի ուսուցչուհի Նորա Պուքօ բանաստեղծութեան մը ընթերցումով քաջալերեց շրջանաւարտները , որոնք իրենց կեանքը կ՚իմաստաւորեն աշխատանքով եւ բարի կենցաղով:

Ապա՝ Սարին Զարշաֆեան (հայերէնով), Կապրիէլլա Պաթիքեան (անգլերէնով)եւ Անի Խաչատրեան (ֆրանսերէնով) յաջորդաբար արտասանեցին իրենց երախտիքի խօսքը, ուղղուած՝ տնօրէնութեան, անցեալի եւ ներկայ ուսուցիչներուն եւ ծնողներուն. այս բոլորը քաղցր յիշատակներով պարուրուած:

Վարժարանի տնօրէն Արմէն Մարտիրոսեան շնորհաւորեց շրջանաւարտներն ու իրենց ծնողները, փոխանցեց իր պատգամը, թելադրելով անոնց ՝ ըլլալ ուսումնատենչ, արժեւորել վարժարանի ընծայած բար-ձր մակարդակի ուսումը, հայեցի դաստիարակութիւնը, ազգային ոգին, միաժամանակ ըլլալով օրինակելի քաղաքացիներ: Ապա, կատարուեցաւ մրցանակներու եւ վկայականներու բաշխում:

36 աշակերտ-աշակերտուհիներ ստանալէ ետք իրենց վկայականները, լսեցին Գեղարդ Ծ.վրդ. Քիւսպէկեանին շնորհաւորութիւններն ու յորդորները. ապա պահպանիչով վերջ գտաւ հանդէսը:

Ծաղիկ Դասարանի Ամավերջի Հանդէս

Յունիս 22ին տեղի ունեցաւ ՀՕՄի Պապայեան Մանկապարտէզի Ծաղիկ դասարանի ամավերջի հանդէսը:

Աշակերտներուն ծնողներն ու հարազատները մեծ խանդավառութեամբ ներկայ էին՝ վկայելու մեր աշակերտներուն առաջին ամավերջի հանդէսը վարժարանիս յարկին տակ:

Հանդիսատեսները առիթը ունեցան դիտելու մանկապարտէզի առօրեան ցոլացնող տեսաերիզ մը, ապա Թաթա Սիմոնեանի «Քայլ առ առաջ» երգով 48 շրջանաւարտ աշակերտ-աշակերտուհիներ պարելով բեմ բարձրացան եւ ներկայացուցին երգերու, արտասանութեան եւ պարի ծաղկեփունջ մը՝ մեծ խանդավառութիւն յառաջացնելով նեռկաներուն մէջ. այսպէս յաջորդաբար կատարուեցաւ «Հայ Մշակոյթ» խմբական ներկայացումը, «Մանկապարտէզ Պապայեան», «Այս Զով Այգին», «One Small Voice» երգերը, «A Prayer for Peace» արտասանութիւնը, «Les Chansons de Notre Enfance», «Shine Your Way», «Գարնան Ծաղիկներ», «Երբ Մեծնամ - When I Grow Up» երգերը սահիկի ընկերակցութեամբ:

Բեմ բարձրանալով, վարժարանիս փոխ-տնօրէն, Ռաֆֆի Սարգիսեան, շնորհաւորեց բոլոր աշակերտներն ու իրենց ծնողները, գնահատեց ուսուցիչներուն անվերապահ աջակցութիւնը: Ան իր խօսքին մէջ շեշտեց հայ մանկապարտէզի կարեւորութիւնը ըսելով. «Սիրելի ծնողներ, հայ մանկապարտէզը կը ներկայանայ որպէս այդ անխորտակ հիմքը, որուն յենած՝ ձեր զաւակները պիտի դառնան օրինակելի հայեր եւ քրիստոնեաներ: Պիտի դառնան հայ համայնքներու ղեկավարներ, հայ մշակոյթի եւ լեզուի պահապաններ, հայ դատի զինուորներ:

«Մինչեւ այնժամ որ հայ վարժարանները կանգուն էն եւ իրեն կառչած են հայ ընտանիքներ եւ անոր պահապան են հայ բարերարներ, նուիրեալ դաստիարակներ եւ համայն հայութիւնը, հայու ոգին պիտի շարունակէ գոյատեւել եւ մեր ժողովուրդին սիրտը պիտի շարունակէ բաբախել»:

Շրջանաւարտ աշակերտները իրենց հրաժեշտի երգով եւ «Մնաս Բարով Մանկապարտէզ»ի ուղերձով վկայականներ ստացան, որմէ ետք Ս. Աստուածածին Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Կոմիտաս Աւ. Քհնյ. Փանոսեան փոխանցեց իր սրտի խօսքը, ապա աղօթքով փակեց հանդիսութիւնը:

Տեղին է յիշել, որ՝ Յունիս12ին, այս 48 շրջանաւարտները, պահելու համար աւանդութիւն դարձած գեղեցիկ սովորութիւնը, ներկայ եղան Ս. Աստուածածին Եկեղեցւոյ սուրբ պատարագի մատուցման, հաղորդուեցան եւ երգեցին «Եկեղեցին Հայկական»ը, խոր յուզում եւ ուրախութիւն պատճառելով իրենց ծնողներուն եւ հաւատացեալ ներկաներուն:

ՀՕՄի Ամէնօրեայ Վարժարանի Ընթացաւարտ Տարուան Ձեռքբերումները

Ստորեւ կու տանք Թորոնթոյի ՀՕ-Մի Վարժարանի հրապարագրումը ընթացիկ դպրոցական տարեշրջանի մասին.

Ահաւասիկ յաջողութիւններով լեցուն տարեշրջան մը իր աւարտին հասաւ: Մինչ կը պատրաստուինք ամառնային արձակուրդին, յետադարձ ակնարկ մը նետելով վերջին 10 ամիսներուն, յիշենք այն բազմաթիւ յաջողութիւններն ու նուաճումները, որոնք արձանագրեցինք վարժարանէն ներս: Ահաւասիկ այդ յաջողութիւններէն 12ը:

Ուսումնական յաջողութիւններ

Ուրախ ենք յայտարարելու, որ անգամ մը եւս մեր աշակերտները միջինէն բարձր դիրքի վրայ են ուսումնական գետնի վրայ: Ըստ Canadian Test of Basic Skills քննութիւններու արդիւնքներուն, վարժարանի Գ-Ը կարգերու աշակերտները մօտաւորապէս կէս տարիով աւելի զարգացած են համեմատաբար միջին արդիւնքներու: Աւելին, ԺԱ կարգի աշակերտներուն 100 տոկոսը (առանց նկատի առնելու նորեկ աշակերտներու մասնակցութիւնը) յաջողեցան Ontario Secondary School Literacy Test քննութեան մէջ: Է-ԺԲ կարգերու աշակերտներէն շատեր նաեւ մասնակցեցան միջազգայնօրէն ճանչցուած թուաբանական եւ համակարգչային գիտութեամբ մրցաշարքերու եւ արձանագրեցին փայլուն արդիւնքներ: Քանի մը աշակերտներ համաշխարհային գետնի վրայ լաւագոյն 25 տոկոսի մէջ տեղ գտան:

Յատուկ շնորհաւորանքներ Գ Կարգի աշակերտ՝ Տիգրան Ղազարեանին, որ առաջնութիւնը շահեցաւ Ontario Federation of Independent Schools Caribou Math մրցաշարքին, որուն կը մասնակցին 5րդ եւ 6րդ դասարաններու աշակերտները, եւ երկրորդ տեղը գրաւեց Գանատայի տարածքին մէջ Math Kangaroo մրցաշարքին: Նաեւ Է կարգի աշակերտներէն Միքայէլ Պաղուզեան, Զարեհ Մարգարեան, Արթուր Շեկեան եւ Դանիէլ Չերքէզեան առաջին անգամ ըլլալով մասնակցեցան Թորոնթոյի Համալսարանի մէջ տեղի ունեցած Let's Talk Science Challenge մրցաշարքին եւ 31 խումբերու մէջ 5րդ տեղը գրաւեցին:

Մարզական ախոյեան ենք

Երեք տարիներ առաջ վարժարանիս մարզական պատասխանատու Ալեքս Մովել որոշեց ՀՕՄի Ամէնօրեայ Վարժարանի մարզական մակարդակը բարձրացնել: 3 Մարտ 2016ը պատմական օր մըն էր մեր վարժարանին համար, որովհետեւ երկրորդական բաժնի աղջկանց վոլիպոլի խումբը առաջին անգամ ըլլալով առաջնակարգ տեղը գրաւեց: Անգամ մը եւս կը շնորհաւորենք խումբը եւ խորին շնորհակալութիւն կը յայտնենք պարոն Մովելին եւ մարզիչներ Սամ Մանուկեանին եւ Յակոբ Քաքուսեանին:

Ախոյեան ենք նաեւ ոտնագնդակի մէջ: Մեր վարժարանի երկրորդական բաժնի տղոց խումբը առաջնութիւն շահեցաւ այս տարուայ Metro Cup մրցաշարքին:

ՀՕՄի «Ռուբինա» Մանկամսուրը արտօնագրուած է...

ՀՕՄի Թորոնթոյի «Ռուբինա» մասնաճիւղի նիւթական եւ բարոյական օժանդակութեամբ մեր վարժարանի մանկամսուրը բոլորովին վերանորոգուեցաւ, եւ այժմ կը գործէ նահանգի կրթական նախարարութեան կարգաւորութիւններու եւ չափանիշներու համաձայն:



Խորին շնորհակալութիւն մանկամսուրի հիանալի աշխատակազմին եւ ծնողներուն իրենց անսակարկ նուիրումին համար: Մանկամսուրի պաշտօնական բացումը տեղի ունեցաւ 10 Փետրուար 2016ին եւ անուանակոչուեցաւ ՀՕՄի «Ռուբինա» Մանկամսուր:

Բարի գալուստ Թորոնթօ

2015-2016 տարեշրջանի ընթացքին, ՀՕՄի Ամէնօրեայ Վարժարանը ընդունեց 55 նոր աշակերտներ, որոնք վերջերս տեղափոխուած են Գանատա: Մեր վարժարանի աշակերտութիւնը, տնօրէնութիւնը, ուսումնական կազմն ու կրթական մարմինը ջանք չխնայեց, որ Գանատա ժամանած մեր նոր աշակերտները դպրոցական իրենց առաջին իսկ օրէն հանգիստ զգան: Անոնց ներկայութիւնը մեծապէս կը հարստացնէ մեր վարժարանը:

Միասնաբար՝ Արցախի համար

Ապրիլի սկիզբը Արցախի մէջ տեղի ունեցած աղէտալի օրերէն ետք, համայն հայ ժողովուրդը համախմբուեցաւ եւ թիկունք կանգնեցաւ Արցախի մեր քոյրերուն եւ եղբայրներուն: Մեր վարժարանի աշակերտութիւնն ալ իր բաժինը ունեցաւ այս կարեւոր աշխատանքին մէջ:

Մեր վարժարանի զոյգ երգչախումբերը պատրաստեցին ազգային երգերու շարանի տեսերիզ (մաս 1, մաս 2) մը՝ որ փոխանցուեցաւ Արցախի առաջին գծի վրայ գտնուող զինուորներուն: Նաեւ Մայիսին տեղի ունեցած տարեկան ելոյթները (դիտէ մանկապարտեզի ելոյթը) նուիրուեցան Արցախին: Ուրախ ենք յայտարարելու, որ մեր աշակերտութեան եւ ծնողներու շնորհիւ, վարժարանի անունով աւելի քան 8,000 տոլար հանգանակուեցաւ Թորոնթոհայ գաղութի «Օգնէ Արցախին» ծրագրին համար:

Googleի պաշտօնեայ եւ վարժարանի շրջանաւարտ Վարուժ Շիթիլեան կ՚այցելէ...

Փետրուար 26ին, Google ընկերութեան բարձր պաշտօնեայ եւ վարժարանէն շրջանաւարտ Վարուժ Շիթիլեան այցելեց վարժարանի երկրորդական բաժինը: Ան զրուցեց աշակերտութեան հետ արուեստագիտութեան կարեւորութեան եւ իր տարիներու փորձառութեան մասին: Ապագային, կը ծրագրենք հրաւիրել զանազան բնագաւառներէ ներս յաջողութիւն գտած շրջանաւարտներ, խորհուրդ եւ ուղղութիւն տալու՝ մեր աշակերտներուն:

iPad ծրագրի հաստատում

Վերջերս մեր վարժարանը աւելի քան 40 iPad համակարգչային սարքերով օժտուեցաւ: Յառաջիկայ տարեշրջանի սկիզբը պիտի սկսի iPad ծրագիրը, որուն շնորհիւ մեր աշակերտութիւնը առիթը պիտի ունենայ ուսումնական ծրագիրներուն մէջ գործածել այս սարքերը: Կը ծրագրենք նաեւ այլ նոր «խելացի» իրերով օժտել վարժարանը, ինչպէս շարժական համակարգիչներով եւ լուսարձակ մեքենաներով:

Թելեթոն 2016ը գերազանցեց թիրախի գումարը եւ աշակերտական «Արուեստի պատ»ի ձեւաւորումը սկսաւ...

Ուրախութեամբ կը յայտարարենք, որ ՀՕՄի Ամէնօրեայ Վարժարանի Թելեթոն 2016ը գերազանցեց $350,000 թիրախի գումարը, աւելի քան 600 նուիրատուներով (դիտէ Թելեթոն 2016ի առաջին եւ երկրորդ յայտագիրները): Ընդունեցէ՛ք մեր խորին շնորհակալութիւնները ձեր կատարած առատաձեռն նուիրատուութեան համար, որ մեծապէս նպաստեց մեր հանգանակային աշխատանքի յաջողութեան:

Մեր նուիրատուներէն շատերը ուղղակի նուիրեցին վարժարանի աշակերտական «Արուեստի պատ»ի հանգանակային արշաւին: Աշակերտներու արուեստը պիտի զետեղուի դպրոցական երկու շէնքերու պատերուն վրայ:

Արդէն իսկ սկսած ենք պատրաստուելու թելեթոնի տասնամեակին, որ տեղի պիտի ունենայ գալ տարի ու յոյսով ենք որ մեր երկարամեայ բարերարներու ու գաղութի կազմակերպութիւններու կողքին, նոր բարերարներ եւս նեցուկ կը կանգնին Օնթարիոյի միակ ամէնօրեայ, 600է աւելի աշակերտներ պահող հայ դպրոցին եւ կը հաւատան անոր առաքելութեան:

Փորձառական ուսում

Աշնան, մեր վարժարանի Է-Թ կարգերու աշակերտները «Սիտռ Ռիճ» բանակավայրէն ներս անցուցին անմոռանալի 4 օրեր, որուն ընթացքին սորվեցան ղեկավարական գիտելիքներ ու զուարճացան զանազան արտադասարանային աշխատանքներով:

Ինչպէս ամէն տարի, այս տարի եւս վարժարանի Ժ կարգի աշակերտները այցելեցին մայր հայրենիք՝ Հայաստան եւ Արցախ: Զբօսաշրջութենէ անդին այս այցելութիւնը առիթը տուաւ մեր աշակերտներուն աւելի ամուր կապեր հաստատելու հայրենիքի ու հայկական մշակոյթին հետ:

Իսկ այժմ, վարժարանի ԺԱ կարգի աշակերտները կը պատրաստուին ուղղուելու դէպի Վենետիկ, ուր պիտի հետեւին հայերէնի յատուկ դասընթացքներու:

Երաժշտական յառաջխաղացք...

Չորս տարիներ առաջ, մեր վարժարանի երաժշտական ծրագրին մէջ ընդգրկուեցաւ գործիքային ծրագիրը: Ղեկավարութեամբ՝ արհեստավարժ ֆլեյտահար Սուրէն Ամիրխանեանի, վարժարանի նուագախումբը զգալիօրէն յառաջացած է: Այս տարուայ ելոյթի ժամանակ, մեր աշակերտական նուագախումբը հմայեց եւ ապշեցուց ներկաները՝ զանազան խրթին կտորներու իրենց մեկնաբանութիւններով:

Մեր շրջանաւարտները՝ մեր ապագան...

Մեր վարժարանի ԺԲ կարգի բոլոր աշակերտները ընդունուած են զանազան համալսարաններ եւ գոլէճներ: Սեպտեմբերէն սկսեալ, մեր նոր շրջանաւարտները պիտի յաճախեն Թորոնթոյի (University of Toronto), «Եորք» (York), «Ռայրսըն» (Ryerson), «Մքմէստըր» (McMaster University) եւ այլ բարձրորակ կրթական հաստատութիւններ: Որքա՜ն հպարտ ենք մեր շրջանաւարտներով եւ իրենց կը մաղթենք ամենայն յաջողութիւն: Քաջ գիտենք, թէ անոնք միշտ մաս պիտի կազմեն վարժարանի մեծ ընտանիքին:

Միշտ կը ծրագրենք վաղուայ համար...

Խորհրդակցելէ ետք մեր ծնողներուն, ուսուցիչներուն, շրջանաւարտներուն եւ գաղութի անդամներուն հետ, սկսած ենք մշակելու ռազմավարական ծրագիր մը՝ յառաջիկայ հինգ տարիներու համար: Յոյսով ենք, որ սոյն ծրագիրը մեր վարժարանի աշակերտներուն համար պիտի շարունակէ ապահովել բարձր մակարդակի ուսում, հայեցի դաստիարակութիւն եւ ազգային տիպար նկարագիր, միաժամանակ ամրապնդելով մեր դպրոցի ու համայն գաղութի փայլուն ապագան: Այս ծրագրի մշակումը կը համարենք անհրաժեշտ՝ ապահովելու համար ՀՕՄի Ամէնօրեայ Վարժարանի կայուն ու յաջող ապագան:

ԹՈՐՈՆԹՈՀԱՅ TORONTOHYE

Խմբագրութեան կողմէ

«Թորոնթոհայ» պատասխանատու չէ իր էջերուն մէջ լոյս տեսած ծանուցումներու բովանդակութեան:
Մեզի յղուած բոլոր թղթակցութիւններն ու գրութիւնները ենթակայ են որոշ խմբագրումի:

Տիկին Տիգրանուհին...

«Արիւնոտ դրօշ,
Վեհ Դաշնակցութեան
Ծածանե՛ց ընդդէմ՝ բռնակալութեան...»

Ահաւասիկ մեր կէսօրուայ մրափի «քուն բերող» երգը, շնորհիւ մեր բոլորին շատ սիրելի տիկին Տիգրանուհիին. ա՜խ, ի՜նչ բախտաւոր էինք...

***

Երէկ Թորոնթոյէն մեծ ցաւով ստացայ մեր շատ սիրելի տիկին Տիգրանուհիին մահուան տխուր լուրը. լուր մը, որ դաժանօրէն անակնկալ էր եւ անսպասելի: Մօտ երկու շաբաթներ առաջ հայրս կը գտնուէր ընկեր Սուրէնին գործատեղին եւ «Facetime»ով միացաւ հետս, որ նախկին ուսուցիչս կարենայ հեռուէն բարեւել, եւ ցոյց տալ, որ ան առողջ է ու առոյգ:

«Ես լաւ եմ. կատարեա՛լ... կարեւորը դուք լաւ ըլլաք, տղա՛ս...»

Այս տեսակի բնաւորութիւն ունէր մեր դաստիարակը. անձնուէր, անձնուրաց, անշահախնդիր:

Թէեւ գիտէի, թէ վերջին տարիներուն անոր առողջութիւնը վատթարացած էր, մեր կարծ խօսակցութեան ժամանակ վստահեցուց, թէ ինք լաւ էր, այդքան ատեն, որ մենք լաւ էինք. այդքան ժամանակ, որ իր հարիւրաւոր «զաւակները» լաւ էին, յաջող էին, ուրախ էին:

Տիկին Տիգրանուհին երբեք հարազատ զաւակներով չբախտաւորուեցաւ. անոր բազմաթիւ աշակերտները - քանի սերունդներէ բաղկացած հարիւրաւոր, նոյնիսկ թերեւս հազարը գերազանցող աշակերտները- եղան իր որդեգիր զաւակները...հոգեւոր զաւակները:

Ցաւախ կ՚ըսուի, թէ ուսուցիչները կը ստանձնեն «երկրորդ ծնողք»ի կարեւոր դերը, սակայն չենք անդրադառնար, թէ մեր առաջին ուսուցչուհիները, մանաւանդ հայկական մեր վարժարաններէն ներս, շատ աւելին են: Դաստիարակելու եւ կրթելու կողքին անոնք առիթը ունին ձեւաւորելու մեր ինքնութիւնն ու անհատականութիւնը եւ մատղաշ հայորդիին կապելու իր լեզուին, մշակոյթին ու պատմութեան:

Տիկին Տիգրանուհին ճի՛շդ այդ ըրաւ, դպրոցական մեր առաջին իսկ օրէն:

Հայկականը «սիրել տուաւ» այն աստիճան, որ մի՛շտ նախընտրեցինք զայն: Երգե՛ց յեղափոխական երգը, լաւ գիտնալով, թէ երեք տարեկան երեխան բառերուն իմաստը չէր գիտեր... «Ռուբէն փաշա», «Զօրավար Անդրանիկ», «Տարօն Տուրուբերան» կոչեց մեզի, լաւ գիտնալով, որ չէինք հասկնար թէ ինչու...

Բայց երգեց ու կոչեց այն յոյսով, որ բան մը կ՚արթնար մեր մէջ, որ կրակ մը կը վառէր մեր սրտերուն մէջ:

Անուշ քուն, սիրելի ուսուցիչ, դաստիարակ, հոգեւոր մայր. հանգիստ ննջեցէք՝ գիտնալով թէ ձեր ու ձեր նմաններու շնորհիւ է, որ «սրտիս մէջը կայ մի կրակ, որ կ՚այրէ զիս ամէն ժամանակ...»

Ու յեղափոխաշունչ այդ երգերով այժմ դուք ննջեցէք խաղաղ...

15-6-2016

Նուիրեալ Դաշնակցականը, Տիպար ՀՕՄուհին՝ Սիրելի Ընկերուհիս...

Խաժակ Գուլաճեան

«Ահա հանգիստ հող կը մտնեմ,
Յոյսս դուք էք ընկերներ...»

Սիրելի՛ Ընկերուհի Տիգրանուհի,

Ի՞նչպէս սկսիմ վերջին նամակս...

Ո՞ր զգացումներս նախ արտայայտեմ,

Բաժանմա՞ն, կարօտի՞, սիրո՞յ, մեղքի՞:

Ուրկէ՞ սկսիմ...

Սկսիմ հոնկէ, երբ մեր ընկերութիւնը սկսաւ:

2007 թուական, Դեկտեմբեր:

Պարզ հանդիպում մը՝ ընկեր Սուրէնի խանութին մէջ, որ ապա վերածուեցաւ բարեկամութեան... անկարելի էր, որ քեզի հետ հանդիպողները չվայելէին քու վարակիչ տաքութիւնդ եւ չզգային ջերմացնող մտերմութիւնդ: Ես ալ եղայ այդ բախտաւորներէն:

Եւ այդ ինն տարուան մեր բարեկամութեան ընթացքին, իրազեկ դարձայ միութենական գործունէութեանդ, հիացմունքով լսեցի ուսուցչական ասպարէզիդ մասին, վայելեցի տաքուկ տունդ եւ ճոխ ընկերային պահերը: Բայց ամենէն աւելին, արժանի դարձայ տարիներով հետդ աշխատելու պատիւին՝ «Ս. Թէիլիրեան» կոմիտէի կազմին մէջ, դուն՝ իբրեւ աւագ քարտուղար եւ ես՝ իբրեւ նորեկ ատենադպիր:

Կեանքդ համակած է իսկական մարդկութիւն, անձնուէր ազգային կեանք եւ հայրենասիրութիւն, ամբողջանուէր ուսուցչական մայրութիւն, հանրային տիպար ու փոխանցիկ ծառայութիւն:

Ու շատ բան սորվեցայ... ու ըմբոշխնեցի գաղափարներուդ ու համոզումներուդ կեանքո՛վ լեցուն հզօրութիւնը:

Այն, որ մենք անցուցիք միասին, այնքա՛ն ներշնչող ու մխիթարական տուեալներ ու պահեր պիտի տրամադրեն ինծի, որ, թէկուզ կորուստդ պիտի փոխարինեն անուշ յիշատակներով ու յուսադրիչ տրամադրութեամբ: Վստահ մնայ, ընկերուհի՛ս, այդ սերունդները, որոնք դուն դաստիարակեցիր ու որոնց ջամբեցիր հայեցի կրթութիւն, իրենց սրտերուն, հոգիներուն ու լոկ էութեան մէջ արդէն վառ պահած են հայրենասիրութեան ու ազգի նուիրումի վառ կրակը եւ պիտի շարունակեն քու օրինակովդ: Հանգիստ մնա՛, ջան... Վարձքդ կատա՛ր:

Աւա՜ղ, վերջին տարուան ընթացքին, անձնական պայմաններս զիս դարձուցին գերզբաղ, թէ՛ անձնական ու միութենական գործերով եւ թէ՛ ընտանեկան նոր բոյն կազմելու հոգերով... ու չկրցայ տեսնել քեզ... լաւագոյն բարեմաղթութիւններդ միշտ կը լսէի բայց... մեղաւոր եմ ընկերուհիս, մեղաւոր եմ... եթէ երբեք կամայ թէ ակամայ քեզ վշտացուցի, ներէ՛ ինծի:

* * *

Նուիրած երկրագունդդ տխուր կը թաւալի՝ գրասեղանիս վրայ:

«Քպպէ Համոտ»ի («աղուոր թռու կծու») բուրմունքն ու համը տակաւին կը պատեն քիմքս:

«Հայկական Սենեակիդ» մէջ մեր ունեցած հանդիպումներու ու զրոյցներու պատկերները կը տողանցեն աչքիս առաջ:

ՀՅԴ «Սողոմոն Թէիլիրեան» Կոմիտէի գրասենեակին մէջ տարիներով միասնաբար կատարած մեր քարտուղարական գործերու պատկերները չեն թողուր զիս հանգիստ:

Մայրական խրատներդ ականջիս մէջ են տակաւին ու տածած գուրգուրանքիդ յուշը կը պատռտէ հոգիս:

Տիգրանուհի Քէնտիրճեան ՀՕՄի վարժարանի աշակերտներու հետ

Ընկերուհի Տիգրանուհի՛, այս քանի մը տողերը ընդունէ իբր մոմ ու ծաղիկ՝ շիրիմիդ:

Հողը թեթեւ գայ վրադ, շա՜տ սիրելի ընկերուհի Տիգրանուհի, Աստուած ՆՈՒԻՐԵԱԼ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆԻ ու ՏԻՊԱՐ ՀՕՄուհի հոգիդ լուսաւորէ:

Բարեւէ՛ բոլորին:

Ընկերաբար ու որդիաբար՝

Հայրենաշունչ Մենտորին

Տիկին Տիգրանուհի Քէնտիրճեանի յիշատակին

Վաղեմի սխրանքներուն հետ՝ դու միջ-նորդ հաղորդակցութեանց,
եւ առեղծուածային զոհողութեանց՝ թարգման:
Հայ մանկան հոգուն ակօսներուն մէջ՝
դուն պահանջատիրութեան հունտերը սերմանող,
Մասիսի շունչով, Սասնայ հողով, Եփրատի ջրով՝
տարերք քո յաւերժական էութեան:
Աչքիդ բիբերն՝ արշալոյս,
հաւատքի, յոյսի եւ սիրոյ պահապան:
Վերակացու՝ խոստմնալից եւ երդուեալ հօտիդ,
Վիտոշի փշոտ ճանապարհին՝ դու խրախուսող ուղեցոյց:

Ռաֆֆի Սարգիսեան

Join us
www.facebook/Torontohye newspaper

Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Ազգային Շաբաթօրեայ Վարժարանի Ամավերջի Հանդէս

Պէթթի Փանոսեան Մինասեան

Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Ազգային Շաբաթօրեայ վարժարանի ընթացիկ տարուայ Ամավերջի հանդէսն էր, Վարժարանիս 60րդ հունձքն էր, որ պիտի ստանար իր վկայականը եւ հրաժեշտ պիտի տար հայաբոյր այս օձախին: 60 տարիներ անընդմէջ եւ մեծ հաւատքով, թորոնթոհայ գաղութը յաջողած էր պահել հայկական շաբաթօրեայ վարժարանը՝ ի գին նուիրուածութեան ու տքնաջան աշխատանքի:

Իսկապէս հպարտանքի արժանի երեւոյթ է, որ նոյնինքն վարժարանի տնօրէնուհիին հաստատումով՝ 246 աշակերտներ իւրաքանչիւր Շաբաթ օր ներկայ գտնուած են հայկական այս վարժարանը, ուր սորված են հայերէնով կարդալ-գրել ու երգել, խաղցած ու զուարճացած են իրենց ընկերներուն հետ, ուսուցիչներուն օգնութեամբ փորձած են աւելի մօտէն ծանօթանալ իրենց արմատներուն ու պատմութեան:

«Սփիւռքահայ իւրաքանչիւր երեխայի իրաւունքն է յաճախել հայկական դպրոց», նշեց վարժարանի տնօրէնուհի դոկտ. Արփի Փանոսեան Մըթարտ, միեւնոյն ժամանակ առաջարկելով, որ այսօրուընէ իսկ պէտք է մտածել նորարարական այն գաղափարներուն մասին, որոնցմով կ՛ուզենք օժտուած տեսնել մեր դպրոցները 10-20, նոյնիսկ 50 տարիներ ետք:

«Յարատեւ հայկական դպրոց յաճախելով է, որ կ՛ունենանք հայախօս սերունդ: Հայերէն լեզուն կ՛ապրի ու կը գոյատեւէ միա՛յն սորվելով եւ խօսելով», եզրակացուց ան: Ապա երախտագիտական եւ շնորհակալական իր զգացումները յայտնեց վարժարանի հին ու նոր տնօրէններուն, փոխ տնօրէն Արա Տէր Յարութիւնեանին խնամակալներուն, նուիրատուներուն, վարչակազմին, ուսուցիչներուն, 60ամեակի յանձնախումբի անդամներուն, ծնողներուն եւ աշակերտութեան:

Անդրադառնալով ընթացիկ տարուայ աշխատանքներուն, ան նշեց վարժարանի հիմնադրութեան 60ամեակին նուիրուած տարեգիրքը (yearbook), ուր գունագեղ ու արդիական ձեւով ներկայացուած են աշակերտութեան զանազան աշխատանքները, ինչպէս նաեւ անդրադարձաւ միամսեայ ամառնային դպրոց ունենալու ծրագիրին մասին, նշելով որ վերոյիշեալները աննախընթաց երեւոյթներ են վարժարանի երկարամեայ գործունէութեան մէջ:

Հանդէսի առաջին բաժինը յատկացուած էր մանկապարտէզի շրջանաւարտներուն: Յաջորդաբար, շուրջ 50 երեխաներ, իրենց ուսուցիչներու առաջնորդութեամբ (Սօսի Պարոնեան, Կրէյս Մելքոմեան, Այտա Քէսիսեան (օգնկն.), Արմինէ Յովհաննիսեան եւ Էլինա Փանոսեան (օգնկն.) ներկայացուցին փունջ մը արտասանութիւններ եւ երգեր, որոնցմէ ետք Ծաղիկ դասարանի աշակերտները ստացան իրենց առաջին վկայականները: Ներկաներուն մէջ ընդհանուր խանդավառութիւն ստեղծուեցաւ, երբ իւրաքանչիւր աշակերտ վկայականը ստացած պահուն յայտնեց, թէ երբ մեծնայ ի՞նչ կ՛ուզէ դառնալ: Այսպէս՝ անոնք փափաքած էին ըլլալ աստղագէտ, երկրաչափ, խոհարար, ոստիկան, ուսուցիչ ու զինուոր:

Ապա, ութերորդ դասարանի դասատու, Անդրանիկ Չիլինկիրեան բեմ հրաւիրեց վարժարանի 60 տարուան գործունէութեան արգասիքը հանդիսացող 14 աւարտականները: Անոնք նախ բարի գալուստ մաղթեցին ներկաներուն, ապա իւրաքանչիւրը բաժին մը ներկայացուց Մ. Իշխանի «Ես Մասիսը չտեսայ» եւ Ա. Ծառուկեանի «Ուխտ Արարատի» բանաստեղծութիւններէն: Գեղարուեստական պատշաճ յայտագիրէն ետք, Շաւարտականները Չիլինկիրեանի եւ Մարիետա Գասպարեանի ձեռամբ ստացան իրենց վկայականներն ու մրցանակները :

Հրաժեշտի ուղերձները ընթերցեցին Փասքալ Գարձեան, Էմմա Գարամանլեան եւ Միքայէլ Գոլենդուխին:

Ապա տեղի ունեցաւ ջահի փոխանցումը: Եօթներորդ դասարանի աշակերտները բեմ բարձրացան ու աւարտական դասարանի իրենց ընկերներէն ստանձնեցին սերունդներ կամրջող խորհրդանշական ջահը, որմէ ետք իր սրտի խօսքը արտասանեց վաստակաւոր ուսուցիչ՝ Չիլինկիրեան:

Գեղարուեստական յայտագիրը շարունակուեցաւ ասմունքով եւ երաժշտութեամբ: Ասմունքի հետեւեալ կտորներով հանդէս եկան վարժարանի նախկին շրջանաւարտներ՝ Թամար Աթիք՝ Վահագն Դաւթեանի «Հաւատում Եմ Քեզ», Տարօն Հալաճեան՝ Գէորգ Էմինի «Սասունցիներու Պարը»: Արին Եալտզճեան դաշնամուրի վրայ ներկայացուց Ա. Խաչատուրեանէն եւ Ա. Պապաճանեանէն կտորնեռ, իսկ Անի Պապայեան դաշնամուրի նուագակցութեամբ հանդէս եկաւ մեներ գով:

Շաբաթօրեայ Վարժարանի 8րդ դասարանի «60-ամեակի հունձքը»:

Առաջինէն չորրորդ դասարանի աշակերտները երգչախմբային կատարումի ժամանակ:

Վերջին եւ այնքան սպասուած բաժինով հանդէս եկան նախակրթարանի աշակերտները, որոնք երգչախմբային համատեղ ելոյթով ներկայացուցին ամբողջ տարուայ ընթացքին սորված իրենց երգերը: Ակնյայտ էր երգչախումբի ղեկավար Նադա Նավասարդեանի անձնուէր եւ բծախնդիր աշխատանքը: Երեխաները զուարթ ու աշխուժ իրենց կատարումներով մեծ ուրախութիւն ստեղծեցին:

Հանդէսի աւարտին, ներկաները մեծ ոգեւորութեամբ հետեւեցան իրենց երեխաներուն կողմէ պատրաստուած արուեստի ցուցահանդէսին, որ ուշագրաւ բազմազանութեամբ կը ներկայացնէր տարուան մը աշխատանքը: Ապա, մտերմիկ մթնոլորտի մէջ ներկաները հիւրասիրուեցան վարժարանի ծնողաց յանձնախումբի կողմէ պատրաստուած համադամ քաղցրաւենիներով եւ գոհունակ բաժնուեցան Ս.Սահակ եւ Ս. Մեսրոպ Ազգային Շաբաթօրեայ վարժարանի հարազատ մթնոլորտէն:

Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ Կիրակնօրեան Վարժարանի Ամավերջի Հանդէս

Մատաթ Բ. Մամուրեան

Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Վարժարանի ամավերջի հանդէսը տեղի ունեցաւ Յունիս 12ին, եկեղեցւոյս «Մակարոս Արթինեան» սրահին մէջ: Հրաւիրեալներու, բարերարներու շարքին ներկայ էին Գանատահայոց Թեմի Փոխ Առաջնորդ եւ եկեղեցւոյս Հոգեւոր Հովիւ Զարեհ Աւագ Քհնյ. Զարգարեան, Թեմական Խորհուրդի Ատենապետուհի Աբէթ Ալբայ, Ծխական Խորհուրդի Ատենապետ Օհան Օհաննէսեան, Կիրակնօրեայ եւ Շաբաթօրեայ Վարժարաններու նախկին եւ ներկայ տնօրէններ, մշակութային միութիւններու ներկայացուցչներ եւ ծնողքներ:

Հանդիսութիւնը սկսաւ աշակերտներուն մուտքով: Բացումը կատարուեցաւ «Հայր Մեր»ով եւ շարականներով: Հռիփսիմէ Սիմոնեան իր բացման խօսքին մէջ բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ ըսաւ. «Կիրակնօրեայ Վարժարանիս առաքելութիւնն է սերունդները դաստիարակել քրիստոնէական հաւատքի ոգիով եւ ամենակարեւորը այն է, որ անոնք Աստուածաշունչէն քաղուած դասերն ու համամարդկային արժէքները գործադրեն իրենց կեանքի բոլոր ասպարեզներուն մէջ»:

Աշակերտները յաջորդաբար ելոյթ ունեցան ներկայացնելով աղօթքներ, Սաղմոսներ ու առակներ քաղուած՝ Աստուածաշունչէն: Ապա տեղի ունեցաւ վկայականներու բաշխում ձեռամբ տէրհօր եւ տնօրէնուհի Պարոնեանի: Շրջանաւարտները եւ աշակերտները ստացան զանազան մրցանակներ՝ տրամադրուած Թորոնթոյհայ կազմակերպութիւններու եւ անհատներու կողմէ:

Տնօրէնուհի Պարոնեան տուաւ վարժարանի գործունէութեան տեղեկագիրը եւ ըսաւ. «Շնորհիւ տնօրէնութեան եւ ուսուցչական կազմի անխոնջ աշխատանքին վարժարանը դարձած է մտերմիկ, հարազատ եւ տաքուկ հաւատքի տուն մը»: Ան շնորհակալութիւն յայտնեց հոգեւոր հայրերուն, Ծխական Խորհուրդին, բարերարներուն եւ ծնողքներուն, որոնք մօտէն կը հետաքրքրուին վարժարանի գործունէութեան: Շնորհակալութիւններ յայտնեց նաեւ ամավերջի հանդէսի մրցանակ յանձնողներուն՝ Սիրվարդ Միքայէլեանին, Սեդա Գանտահարեանին, Սրբուհի Էվրանին եւ Թորոնթոյի Թէքէեան Մշակութային Միութեան:

Տէր Զարեհ իր մաղթանքները փոխանցեց, շնորհաւորեց ուսուցչական կազմը, օգնականները, տնօրէնուհի Պարոնեանը եւ առ ի գնահատանք իր 20ամեայ ծառայութեան ձեռամբ Տէր Հօր եւ Օհաննէսեանի՝ Պարոնեան ստացաւ յուշատախտակ մը: Ծաղկէփունջերով եւ յիշատակի նուէրներով պատուուեցան նաեւ ուսուցչուհիներն ու օգնականները:

Տէր Զարեհ Աւագ Քահանայի «Պահպանիչ»ով վերջ գտաւ հանդիսութիւնը:

Ծնողքներ ու աշակերտներ հրաժեշտ տուին ուսուցիչներուն՝ վերամուտին տեսնուելու յոյսով: Հանդէսէն ետք, ներկաները հիւրասիրուեցան եւ առիթը ունեցան դիտելու աշակերտներու ձեռային աշխատանքները:

Մեծ Մայրերու եւ Մեծ Հայրերու Նուիրուած Համերգ

Վարդան Աւագ Սարկ. Վարդանեան

Մայիս 7ին Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ մեծ մայրերուն եւ հայրերուն նուիրուած համերգ մը: Շնորհիւ եկեղեցւոյ Զարեհ Ազնաւորեան Կրտսերաց Դպրաց Դասին իրենց ղեկավարի առաջնորդութեամբ, յանձինս Լենա Պէյլէրեանի, գեղեցիկ երեկոյ մը նուիրեցին ներկաներուն:

Սուրէն Ս. Արք. Գաթարոյեան իր հովանաւորութիւնը չէր զլացած այս համերգին, ինչպէս նաեւ եկեղեցւոյս հոգեւոր հովիւը Գեղարդ Վրդ. Քիւսպէկեանը՝ իր նախագահութիւնը: Եկեղեցւոյ հոգաբարձութեան տնօրինութեամբ ու Կրտսեր Դպրաց Դասի Ծնողական Յանձնախումբի յարատեւ աշխատանքին իբրեւ արդիւնք այլազան յայտագիր մը հրամցուեցաւ ունկնդիրներուն:

Ընդհանրապէս կրօնաշունչ, ազգային երաժշտական հեղինակութիւններ ներկայացուեցան խումբին կողմէ, առաւել, տաղանդաւոր կրտսեր դպրաց դասի անդամներու ելոյթներ: Կային երգեր, որոնք յուզումնալից էին ու լաւ տպաւորութիւն ձգեցին ունկնդիրներուն վրայ: Լրջութիւնը, կանոնաւորութիւնը, յայտագրի բովանդակութիւնը, եռանդը իսկապէս գովելի ու հաճելի էին:

Շնորհալի էին հանդիսավարները իրենց բացման ու փակման խօսքերով: Յայտագիրը հարուստ էր իր այլազանութեամբ, 6 հոգի ասմունքեցին, 18 դպիրներ Սուրբ Գիրքէն Սաղմոսասացութիւններ ու Մարգարէական հատուածներ արտասանեցին, ու 6 նոր տաղանդներ յայտնաբերուեցան դաշնակի, կիթառի եւ քանոնի վրայ նուագելով: Երգը հայ ժողովուրդի երաժշտական մշակոյթի հնագոյն ճիւղն է, ան կը փայփայէ ամէնէն անուս նախնական մարդուն իսկ զգացումները մտնելով հոգիներէն ներս: Այս 35 պարմանները իրենց կատարողական կարողութեան, ներդաշնակ երգեցողութեան զուլալ եւ հնչուն ձայներուն հիացմունքս կը յայտնեմ. երգեր կային կարծես կախարդական ուժ մը ունէին եւ անոնք արժանացան նրկաներու ջերմ ընդունելութեան: Դպրապետուհի Տիկ. Լենա Պէյլէրեանի տքնաջան փորձերը, անտարակոյս երգողներու ձայնային տուեալները՝ ինքնավստահ մեկնաբանութեամբ հոգեպարար պահեր շնորհեցին ներկաներուն:

Մանկական եւ պատանեկան շրթներ Սբ. Գրային հատուածները մաքուր հայերէնով արտասանեցին: Երիտասարդ տաղանդները վստահաբար ժամանակի ընթացքին լուսաշող ճամբայ մը պիտի բանան իրենց ապագային յաջողութիւններ պսակելով:

Ս. Աստուածածին եկեղեցւոյ կրտսեր դպրաց դասը:

Եկանք, ծափահարեցինք եւ հիացանք, հոգեհարազատ եւ զգայուն եւ մաքուր մեր համբուրելի Մեծ Մայրերն ու Մեծ Հայրերը վայելքի պահեր ունեցան ու հոգիի եւ մտքի լոյսով զարդարուած հրճուանքով վայելեցին իրենց թոռներուն ելոյթները: Փակման խօսքէն առաջ Տիկ. Պէյլէրեանը իր հիացմունքը յայտնեց այս ձեռնարկի յաջողութեան իրենց մասնակցութիւնը բերող ծնողական յանձնախումբին, եկեղեցւոյ հոգաբարձութեան, ինչպէս նաեւ ներկաներու քաջալերանքին:

Փակման խօսքէն ետք գեղեցիկ ծաղկեփունջով մը յարգուեցաւ Տիկ. Պէյլէրեանը իր ջանքերուն համար: Ապա եկեղեցւոյս հովիւի օգնական Տ. Կոմիտաս Աւագ Քահանայ Փանոսեան գովեց այս յաջող ձեռնարկը ու կազմակերպողները եւ նորանոր յաջողութիւններ մաղթեց խումբին եւ շնորհակալութիւն եւ առողջութիւն՝ անոր ղեկավար Տիկին Լենա Պէյլէրեանին: Ներկաները ծափերով իրենց համակրանքը արտայայտեցին ու հրաւիրուեցան եկեղեցւոյս ներքնասրահը հիւրասիրութեան, որ պատրաստուած էր ծնողական յանձնախումբին կողմէ:

Կը շնորհաւորեմ Մեծ Մայրերն ու Մեծ Հայրերը, որպէսզի անոնց երկինքը միշտ անամպ մնայ, հոգինին խաղաղ ու գարնանաբոյր շարունակեն սնուցանել ու դաստիարակել հայեցի հոգիով զաւակներ ու թոռներ եւ անոնց երակներուն մէջ ներարկեն մեր Սուրբ Նահատակներու անձնազոհութիւնը:

ՀՕՄի Ռուբինա Մասնաճիւղ.
Մայրերու Օրուան Տօնակատարութիւն

Ս. Փայլեան (աջէն Ա), Ա. Սաֆարեան (ձախէն Ա) պարգեւատրուող մայրերուն՝ Զապէլ Խանծողլեանի, Արշալոյս Մխսիարթինեանի, Մարի Մավլեանի եւ Ովսաննա Փիլաւճեանի հետ:

Հայ Օգնութեան Միութեան Թորոնթոյի Ռուբինա Մասնաճիւղի մայրերու օրուան տօնակատարութիւնը տեղի ունեցաւ 6 Մայիսին, Հայ Կեդրոնի սրահին մէջ, ներկայութեամբ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Օգնական Հովիւ՝ Կոմիտաս Աւ. Քհնյ. Փանոսեանի եւ շուրջ 220 անդամուհիներու եւ բարեկամներու:

Օրուան հանդիսավար՝ Ալին Տօնապետեան-Թոսունեան բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ շնորհաւորեց բոլոր մայրերը. ան իր խօսքին մէջ անդրադարձաւ հայ մօր արժանիքներուն մասին եւ գեղեցիկ մեկնաբանութեամբ դրուատեց առհասարակ հայ մօր ստանձնած դերը հայ կեանքէն ներս. ապա հրաւիրեց Կոմիտաս Աւ. Քհնյ. Փանոսեանը որպէսզի կատարէ ճաշի օրհնութիւնը:

Գեղարուեստական յայտագիրը սկսաւ Հալէպէն Թորոնթօ նոր հաստատուած սիրուած երգիչ՝ Մեր Մինասեանի երկու երգերով. ան իր հրապուրիչ ձայնով հմայեց ներկաները: ապա Սարին Փոլատեան իր հրաշալի հայ մօր նուիրուած ասմունքով, ընկերակցութեամբ Արա Ղուկասեանի կիթառի վրայ նուագելով, արժանացան ներկաներու բուռն ծափահարութեան:

Տարիներէ ի վեր սովորութիւն դարձած է մայրերու օրուան պատուել քանի մը տիպար մայրեր, բեմ հրաւիրուեցաւ ՀՕՄի Ռուբինա մասնաճիւղի վարչական անդամ՝ Սիլվա Փայլեան, ներկայացնելու պատուող չորսը մայրերու կենսագրականները: Ան հրաւիրեց ՀՕՄի Ռուբինա Մասնաճիւղի Ատենապետուհի՝ Արմիկ Սաֆարեանը յանձնելու յուշանուէրները պարգեւատրուող մայրերուն՝ Զապէլ Խանծողլեանին, Արշալոյս Մխսիարթինեանին, Մարի Մավլեանին եւ Ովսաննա Փիլաւճեանին:

Ձեռնարկի ընթացքին տեղի ունեցաւ տեսերիզի ցուցադրութիւն, ուր ներկայացուեցաւ Ստեփանակերտի մէջ Սօսէ Մանկապարտէզի վերակառուցման աշխատանքներուն մասին: Բեմ հրաւիրուեցաւ Հուրի Նաճարեանը եւ տեղեկութիւններ փոխանցեց այս առընչութեամբ:

Երեկոն խանդավառեց DJ Արիս Արապեանը որ հայկական պարեղանակներով խանդավառեց ներկաները:

Տեղի ունեցաւ վիճակահանութիւն եւ ներկաներէն շատեր բախտաւորուեցան արժէքաւոր նուէրներով:

Անահիտ Կուտսուզեան Տարեկան Համերգը

Ինչպէս ամէն տարի, այս տարի եւս, Յունիս 23ին, տեղի ունեցաւ «Անահիտ» երաժշտական համերգը՝ Հայ եղբայրական եկեղեցւոյ մէջ:

Շարունակաբար, երգով ու նուագներով բեմ բարձրացան հետեւեալ աշակերտները՝ Արջուն Զինտալ, Քամիլլա Գանտահարեան, Ճուլեան Լի, Քարինա Գանտահարեան, Արեգ Մուրատեան, Արի Մուրատեան, Այլին Չելա, Գալիա Պալապանեան, Ամելի Պալապանեան, Քրիսթինա Գասիմով, Դաւիթ Պոյաճեան, Յեն Ֆու եւ Իզաբել Լի...

Բոլոր կատարումները հաճելի եւ սրտայոյզ էին: Համերգի աւարտին, ըստ սովորութեան, երաժշտագիտունի Անահիտ Կուտսուզեան ներկաներուն նուիրեց իր յօրինած երգերէն մէկը՝ «Կենաքը», Ռուբէն Մնացականեանի խօսքերով եւ անգլերէն կտոր մը:

Համերգը աւարտեցաւ բուռն ծափահարութեամբ եւ ներկաներու ուրախ տրամադրութեամբ:

Անահիտ Կուստուզեան իր հմայքով եւ տքնաջան աշխատանքով տարիներէ ի վեր կը ձգտի եւ կ՛աշխատի մեր պատանիներուն փոխանցելու դարերու սխրանքներէն եւ Եղեռնի ճանապարհէն մեզի հասած հայ երգը:

Թորոնթոյի Հայ Օգնութեան
Միութեան «Ռուբինա» Մասնաճիւղ
Տոհմիկ Օր
Զօնուած՝
20-րդ Դարու Հայ Ազգի Հերոսամարտերուն
Վանի, Տարօնի, Ուրֆայի, Շապին Գարահիսարի,
Զէյթունի, Հաճընի, Այնթապի, Մուսա Լեռան, Բաշ
Ապարանի,Ղարաքիլիսէի, Սարտարապատի եւ Արցախի
Շաբաթ 3 Դեկտեմբեր 2016
Միասնաբար ոգեկոչենք մեր հերոսամարտերը
Հերոսամարտ մը հովանաւորելու համար հաճեցէք կապուիլ
ՀՕՄ-ի վարչութեան հետ arstoronto@gmail.com

Քեսապի Ազատագրութեան Երկրորդ Տարեդարձ եւ Նահատակութիւն Ռաֆֆի Պչաքճեանին

Ռաֆֆի Պչաքճեանի յուղարկաւորութենէն տեսարան մը, Ս. Աստուածածին եկեղեցի Հալէպ:

Կարօ Վ. Մանճիկեան

Գաղափարներն ու միտքերը կը տողանցեն գլխուս մէջ: Քեսապի ազատագրութեան երկրորդ տարեդարձն է (14 Յունիս 2014 - 14 Յունիս 2016): Այս «փոքր» թուականը յիշելով՝ բարձր պէտք է աղաղակել:

Սակայն աղմուկը շատ բարձր է Սուրիոյ զանազան ոստաններուն մէջ, խլացուցիչ, հրազէններու, հրասանդներու, հրասայլերու, թնդանօթներու, հրթիռներու, օդանաւերու աղմուկ ու աղմուկ... նահատակներ:

Արցախի մէջ տակաւ ինկող նահատակներուն վրայ արձակուած մահաբեր պայթուցիկ նիւթերու- սարքերու աղմուկը, հարիւրաւոր մղոններ կտրելով, կը հասնի մեր մօտ՝ նոյնքան հնչեղ, նոյնքան ազդեցիկ եւ արմատախիլ ընող:

Երկու տարիէ ի վեր կ՚ուզենք հանրային ծաւալուն ձեռնարկով մը՝ ժողովրդային համախմբում, երգ ու պարով տօնախմբել Քեսապի ազատագրումը: Սակայն... սակայն Սուրիոյ հնգամեայ տագնապի կոհակներուն ելեւէջը թոյլ չի տար, որ կարենանք պարել:

Այո՛... արգիլուած է պարել:

Արգիլուած է պարել քոչարին, *կերմեր ֆըստանը, եարխուշտան*...

Մեծ պետութիւններ արգիլած են ո՛չ միայն քեսապցիներուն, այլեւ համայն սուրիացիներուն պարել, ուրախանալ... կամ ապրիլ: Մէկ խօսքով, արգիլուած է ապրիլ:

Ինչպէ՞ս պարենք, ուրախանանք, երբ ամէնուրեք՝ կրակ ու բոց, քանդում. մահ-նահատակ:

Ինչպէ՞ս պարենք, երբ դաւադիր հրասանդի մը պայթած արկով Ազգ. Քարէն Եփփէ Ճեմարանի (Նոր Գիւղ) կից կը նահատակուէր համայն հալէպահայութեան ժողովրդային ինքնապաշտպանութեան կոչուած պահակներու գլխաւորը, առաջնորդը, գաղափարական, ազգային, հայրենասիրական մտքերն ու ապրումները, պարզ ու խորունկ լռութեամբ իր մէջ ամփոփած, ամէնուն սիրելի, մարդկային ամէնէն տարրական արժանիքներու թարգմանը հանդիսացող, անմահ ընկեր Ռաֆֆի Պչաքճեանը:

Տակաւին մէկուկէս տարիներ առաջ սուրիական հայրենիքի պաշտպանութեան ճամբուն վրայ կը նահատակուէր անոր երէց եղբայրը՝ Յովսէփը: Հազիւ թէ կը յիշեմ անոնց հայրը, արդեօք Մովսէ՞ս էր անունը: Ի՞նչ կարեւոր է: Կարեւորը այն է, որ զօր. Դրօ Կանայեանէն վաստկած շունչով ապրած ու դաստիարակած էր իր զաւակները:

Եւ անոնք (Ռուբէն Տէր Մինասեանի բառերով) որպէս «պարարտ խոյեր», մատաղ դարձան Սուրիոյ, անոր ժողովուրդին, հալէպահայութեան մերօրեայ բագինին վրայ:

Ռաֆֆիին մասին թող գրեն իր զինակիցները: Շատ բան գիտեն այդ լուռ ու մունջ տղուն մասին:

Մէկ խօսքով, Ռաֆֆին կրնայ մերօրեայ սերունդին որպէս ներկայացուցիչ օրինակ դառնալ գալիք սերունդներուն:

Սիմոն Սիմոնեան իր «Լեռ եւ ճակատագիրը» գիրքին մէջ ունի սքանչելի պատմուածք մը, վերնագիրը չեմ յիշեր. մօտս գտնուած հատորը «զոհ» գացած էր Քեսապի 2014ի ներխուժումի բռնարարքներուն, ուստի չեմ կրնար ստուգել խորագիրը, սակայն մէջը ծեր սասունցի մը իր ցուպը վեր բարձրացնելով՝ սպառնացած էր երիտասարդ Սիմոնին (Հալէպի մէջ) ըսելով.

-Մենք արիւն տեսած մարդիկ ենք, մեր մասին ինչպէ՞ս կը համարձակիս գրել:

Այո՛, արեամբ թաթախուած անմահներուն մասին յետմահու գրելը, դաշնակցականին պարտաւորութիւնն է, իսկ անոնց հոգին, անոնց, որոնք կեանքի մէջ վարձք ու փառք չփնտռեցին, այլ միայն անսակարկ տուին, զոհաբերեցին, անոնց հոգին այդ գիրերը կը ստանայ որպէս խունկ ու մոմ... անոնց անմահութիւնը կը յայտնաբերեն այդ գրութիւնները:

Գրեցէ՛ք...

Կ՚ուզէի Քեսապի ազատագրութեան 2րդ տարեդարձին առիթով ուրախ բաներ գրել: Ես չեմ կրնար պարել, բայց կ՚ուզէի, որ գրիչս պարէ, թէկուզ՝ ծուռ ու մուռ:

Դուք ի՞նչ կ՚ուզէք՝ ըսէք.

«Ես պարել գիտեմ, բայց գետինը ծուռ է» Արամ Հայկազ, իմ նախասիրած հեղինակս, որ գրած է հայոց գողգոթային մասին եւ ներկայացուցած է այլազան միջավայրերէ, իսկական կեանքէ առնուած պատկերներ, պատմուածքներ Մեծ եղեռնի ամենասահմռկելի տեսարանին: Նկարագրութեան ընթացքին միշտ կը յաջողի ժպիտ մը խլել մեր շրթներէն. փոխարէնն ալ, ամենագեղեցիկ պատկերի նկարագրութեան պահուն միշտ կը յաջողի արցունքի կաթիլ մը խլել մեր աչքերէն. միայն մէկ ժպիտ, միայն մէկ կաթիլ արցունք:

Հայու կեանք ու ճակատագիր:

Սուրիոյ այս դժնդակ իրավիճակին մէջ մարդոց շրթներէն ժպիտ խլելու համար Արամ Հայկազ պէտք է ըլլալ:

Սակայն ա՛յս է կեանքը... Անիկա պիտի շարունակուի Ռաֆֆիներու օրինակով:

Ռաֆֆի՛, դուն լուռ գործողդ, օրինակողդ սերունդներու ճամբան լուսաւորող ջահն ես:

Դուն անմահ ես, ընկե՛ր:

Հալէպի Մէջ Նահատակուեցաւ Ռաֆֆի Պչաքճեանը

Ռաֆֆի Պչաքճեան

Հալէպի մէջ հրասանդի մը պայթիւնին հետեւանքով նահատակուեցաւ Հալէպի հայկական թաղամասերու ինքնապաշտպանութեան դաշնակցական ղեկավար Ռաֆֆի Պչաքճեանը:

Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ յուղարկաւորութիւնը, որուն ներկան էին ՀՀ Հալէպի գլխաւոր հիւպատոս Տիգրան Գէորգեան, Հայ Աւետարանական Համայնքի Համայնքապետ Վեր. Յարութիւն Սելիմեան, Պատկան Մարմնի, Ազգային Իշխանութեան ներկայացուցիչներ, նահատակ հայորդիին ընտանեկան պարագաները, սուրիական բանակի բարձրաստիճան պատասխանատուներ, Հայկական թաղամասերու ինքնապաշտպանութեան նուիրեալ հայ տղաքը, ՀՄԸՄի փողերախումբը, արի-արենոյշներն ու հանգուցեալին հարազատներն ու գաղափարակից ընկերները:

Յուսիկ Աւագ Քահանայ Սեդրակեան լուսարձակի տակ առաւ նահատակ հայորդիին գաղափարական նուիրումը, յանուն հայկական թաղամասերու ինքնապաշտպանութեան անձնուրաց կեանքն ու դաշնակցականի ոխտին հաւատարիմ ծառայութիւնը:

Յուղարկաւորութեան ժամանակ հանգուցեալին դամբանականը արաբերէնով արտասանեց Ազգային Քարէն Եփփէ Ճեմարանի տնօրէն Յակոբ Քիլէճեան, իսկ հայերէնով՝ Հայկազ Ասատուրեան: Սուրիական բանակի բարձրաստիճան սպայի մը կողմէ վեր առնուեցաւ նահատակ հայորդիին խիզախ ու տիպար կեանքն ու հաւատարմութիւնը:

550 Հալէպահայ Կը Սպասէ Երեւան Հասնելու Իր Հերթին

Անելանելի վիճակի մէջ գտնուող մօտ 550 հալէպահայ կը սպասէ իր հերթին՝ վայրկեան առաջ հեռանալու ռմբակոծուող Հալէպէն: «Հալէպ հայրենակցական բարեսիրական» կազմակերպութեան անդամները դրամահաւաք նախաձեռնած են, ամէն օր կը սպասեն բարերարներու նուիրատուութիւններուն, որպէսզի կարենան հայրենակիցները ապահով կերպով Երեւան տեղափոխել:

Հալէպի մէջ գտնուող մեր հայրենակիցները նախ կը հատեն Սուրիոյ սահմանը, կը հասնին Լիբանան, այնտեղէն ալ՝ Երեւան: Հայաստան հասնելու համար մէկ մարդու ճանապարհածախսը կը կազմէ մօտ 500 տոլար:

Կազմակերպութեան համահիմնադիր Անի Բալխեան Panorama.amին ըսած է, որ հերթագրուած մարդոց մեծ մասը երեխաներ են, պատանիներ, այրիացած կանայք: Վերջին օրերուն Հալէպի մէջ սաստկացած ռազմական գործողութիւններու ընթացքին կազմակերպութեան միջոցներով 25 հալէպահայ տեղափոխուած է Հայաստան: Հալէպէն մեծ հոսք սկսած է նաեւ Սուրիոյ ծովափնեայ բնակավայրեր, որոնք այս պահուն աւելի անվտագ ու ապահով են:

«Մենք կը սպասենք բարերարներու նուիրատուութիւններուն: Հիմա բարերարներ գտնելը շատ դժուար է: Մինչեւ հիմա սիրահայերուն աջակցութեան ձեռք մեկնած են ոչ միայն հայեր, այլեւ տարբեր ազգութիւններու ներկայացուցիչներ», ըսած է կազմակերպութեան ներկայացուցիչը:

Հերթագրուածներուն առաջին խումբը յառաջիկայ օրերուն Հայաստան պիտի հասնի: Սուրիոյ մէջ պատերազմը սկսելէն ի վեր 220 հոգի կազմակերպութեան օգնութեամբ Երեւան եկած է:

Կազմակերպութեան անդամները կը շեշտեն, որ այս օգնութիւնը չ՚ենթադրեր համայնքի պարպում, քանի որ տեղի չ՚ունենար զանգուածային տեղափոխում: Այս կոչը կը վերաբերի միայն այն հալէպահայերուն, որոնք նիւթական պատճառներով չեն կրնար Լիբանանէն տեղափոխուիլ Հայաստան:

Հալէպի հայաբնակ թաղամասերու ռմբակոծումը խստօրէն դատապարտած էր ՀՀ ԱԳ նախարարութիւնը: Շրջափակման մէջ գտնուող քաղաքին մէջ գործող միութիւնները կոչով դիմած են աշխարհին եւ միջազգային հանրութեան՝ խնդրելով օգնել յուղարկաւորելու զոհերը:

Ընդունելով Ցեղասպանութեան Իր Մեղսակցութիւնը, Գերմանիա Այժմ Պէտք է Հատուցում Կատարէ Հայ Ժողովուրդին

Յարութ Սասունեան

Հակառակ «սուլթան» Էրտողանի վիրաւորանքներուն եւ սպառնալիքներուն՝ Գերմանիոյ խորհրդարանը անցեալ շաբաթ համարձակօրէն առաջ գնաց եւ ճանչցաւ Հայոց Ցեղասպանութիւնը: Ասոր ի պատասխան՝ Թուրքիա անմիջապէս ետ կանչեց իր դեսպանը Պեռլինէն:

Պունտեսթակի պատմական բանաձեւը, որ ընդունուեցաւ գրեթէ միաձայնօրէն (ընդամէնը 1 դէմ եւ 1 ձեռնպահ), կը կրէ հետեւեալ խորագիրը. «Ի յիշատակ եւ ոգեկոչում Օսմանեան Կայսրութեան մէջ 101 տարի առաջ հայերու եւ միւս քրիստոնեայ փոքրամասնութիւններու ցեղասպանութեան»: Ըստ ARD հեռատեսիլի կայանին՝ Գերմանիոյ բնակչութեան 74 տոկոսը համաձայն է, որ հայերու դէմ ցեղասպանութիւն իրագործուած է: Ըստ «Շփիկել» ամսագրի մէջբերած մէկ այլ հետազօտութեան՝ Գերմանիոյ հասարակութեան 91 տոկոսը չի վստահիր Էրտողանին...

Գերմանիոյ վարչապետ Անկելա Մերքել՝ զայրացած Էրտողանի յաճախակի ոտնձգութիւններէն, որոշեց Թուրքիոյ մեծամոլ բռնակալը տեղը դնել, մինչդեռ նախագահ Օպամա քաջութիւնը չունեցաւ նոյնը ընելու...: Գերմանիոյ ղեկավարութիւնը ստիպուած էր դիմակայելու ոչ միայն թրքական վարչակարգի յարձակումները, այլ նաեւ Գերմանիոյ մէջ ապրող երեք միլիոն թուրքերէն շատերու սուր քննադատութիւնը:

Խորհրդարանի որոշումէն ետք Էրտողան յոխորտաց. «Մենք մեր անցեալէն ամչնալու պատճառ չունինք, սակայն «Հայոց Ցեղասպանութեան» համար յաճախ Թուրքիան մեղադրող երկիրներու վրայ միլիոնաւոր անմեղ մարդկանց արիւնը կայ»: Թուրքիոյ արդարադատութեան նախարար Պեքիր Պոզտաղ նոյնքան լկտիաբար ըսաւ գերմանացիներուն. «Առաջինը դուք այրեցիք հրեաները վառարաններու մէջ, իսկ հիմա եկած ու թուրք ժողովուրդը կը մեղադրէք ցեղասպանութեան մէջ»: Էրտողանին եւ Պոզտաղին պէտք է յիշեցնել, որ Գերմանիան, ի տարբերութիւն Թուրքիոյ, վաղուց ընդունած է նացիստական ժամանակաշրջանի յանցագործութիւնները, ներողութիւն խնդրած Հոլոքոսթի համար եւ վճարած միլիառաւոր տոլարներու փոխհատուցում:

Կը մնայ տեսնել, թէ պոռոտախօս թուրք ղեկավարները կը համարձակի՞ն արդեօք պատժական գործողութիւններու ձեռնարկելու Գերմանիոյ դէմ, բացի իրենց դեսպանի սովորական ետկանչէն, ինչպէս ամէն անգամ կ՛ընեն, երբ որեւէ կառավարութիւն կը ճանչնայ Հայոց Ցեղասպանութիւնը: Եթէ Էրտողան որոշէ աւելի առաջ երթալ դատարկ սպառնալիքներու շրջանակներէն, ապա նման քայլեր բացասական հակազդեցութիւն կ՛ունենան նոյնինքն Թուրքիոյ վրայ, քանի որ Գերմանիա անոր առեւտրական մեծագոյն գործընկերն է: Թուրքիոյ տնտեսութիւնը արդէն իսկ լուրջ դժուարութիւններ ունի այն բանէն ետք, երբ Ռուսիան արգիլեց թրքական ապրանքներու ներմուծումը եւ անցանկալի համարեց իր քաղաքացիներուն այցը Թուրքիա իբրեւ զբօսաշրջիկ՝ նախորդ տարի Սուրիոյ սահմանին մօտ թուրք զինուորականներու կողմէ ռուսական օդանաւի խոցման պատճառով:

Թուրք ղեկավարները արդէն վնասած են իրենց երկրի շահերը՝ սադրիչ եւ գայթակղեցուցիչ յայտարարութիւններ ընելով, որոնք կը նպաստեն Գերմանիոյ Պունտեսթակի կողմէ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման հրապարակայնացման՝ ամբողջ աշխարհի մէջ: Հազարաւոր թերթեր, կայքեր, ձայնասփիւռի եւ հեռատեսիլի կայաններ անդրադարձան գերմանական որոշումին եւ թրքական պոռթկումներուն: Յատկանշական է, որ միջազգային լրատուական միջոցները յատուկ ուշադրութիւն կը դարձնէին Գերմանիոյ խորհրդարաններու խոստովանութեան, որ իրենց երկիրը Առաջին Համաշխարհային պատերազմի ժամանակ ըլլալով Թուրքիոյ ռազմական դաշնակիցը, մեղսակից է Հայոց Ցեղասպանութեան:

Աշխարհի ամենահեղինակաւոր թերթերէն երկուքը՝ «Նիւ Եորք Թայմզ»ը եւ «Լոնտոն Թայմզ»ը, Յունիս 3ին հզօր խմբագրականներ հրապարակեցին՝ վերահաստատելով Հայոց Ցեղասպանութեան փաստերը, աջակցելով Գերմանիոյ խորհրդարանի որոշման եւ կոչ ընելով Թուրքիոյ՝ դէմ դիմաց գալու իր անցեալի մութ էջերուն հետ:

«Նիւ Եորք Թայմզ»ը իր՝ «Այո, ատիկա Ցեղասպանութիւն է» վերտառութեամբ խմբագրականին մէջ գրած է. «Ատիկա ցեղասպանութիւն էր, 20րդ դարու առաջին ցեղասպանութիւնը...: Պատմական հաշուեյարդարի համար հայերու պահանջը լիովին արդարացուած է...: Նախագահ Օպամա, որ 2008ին թեկնածու եղած ժամանակ խոստացաւ ճանչնալ 1915ի իրադարձութիւնները իբրեւ ցեղասպանութիւն, չկատարեց իր խոստումը...: Գերմանացիները, որոնք հիանալի կերպով դիմակայեցին իրենց սեփական պատմութեան սարսափելի ցեղասպանութիւնը, ճիշդ քայլ կատարեցին՝ արհամարհելով Էրտողանի սպառնալիքները»:

«Լոնտոն Թայմզ»-ի խմբագրականը՝ «Ցեղասպանութեան ժխտում. հայերու զանգուածային ջարդը պէտք է ճանչցուի Թուրքիոյ կողմէ», նոյնքան ազդեցիկ էր. «Գերմանական բանաձեւը ճիշդ է ոչ միայն իր ուղերձով, այլեւ դիւանագիտութեան մէջ: Թրքական զայրոյթը պարբերաբար կ՛ուղղուի բոլոր դաշնակից երկիրներու դէմ, որոնք կը ճանչնան Հայոց Ցեղասպանութիւնը: Այդ արձա-գանգը անարժան եւ հակապատմականէն աւելի վատ է. այդ անասելի չափերու տառապանքի ժխտումը մինչեւ այսօր կը թունաւորէ Եւրոպայի քաղա-քականութիւնը եւ պէտք է վիճարկուի: Հայերու ջարդը, ինչպէս թուրք ժխտողականները կը պնդեն, պատերազմի ժամանակ տեղի ունեցած՝ չնախատեսուած, սակայն անխուսափելի ողբերգութիւն չէր: Անիկա օսմանեան վարչակարգի կողմէ կազմակերպուած տեղահանման եւ զանգուածային սպանդի յատուկ ծրագիր էր: Ժամանակակից Գերմանիան եւ անոր պետական այրերը բազմիցս արտայայտած են իրենց ժողովուրդին զղջումը անցեալ դարու ցեղասպանական բարբարոսութեան համար: Վաղուց ժամանակն է, որ Թուրքիա նոյնը ընէ»:

Ճանչնալով Հայոց Ցեղասպանութիւնը եւ ընդունելով իր պատասխանատուութիւնն ու մեղսակցութիւնը, Գերմանիա այժմ պէտք է համապատասխան հատուցում կատարէ հայ ժողովուրդին՝ ատով իսկ արժանի օրինակ ծառայելով Թուրքիոյ, ոչ միայն ճանաչման, այլ նաեւ հատուցման գործին մէջ...

Ձերբազատիլ Պոլսոյ Ս. Աթոռի Տեղապահ Արամ Արք. Աթեշեանէն

Սարգիս Տաղտէվիրեան

Այլեւս ժամանակն է, որ Պոլսոյ պատրիարքական Ս. Աթոռի տեղապահ Արամ արք. Աթեշեանը ո՛չ միայն պաշտօնազրկուի, այլ նաեւ կարգալոյծ ըլլայ:

Ան Գերմանիոյ խորհրդարանին կողմէ Հայոց ցեղասպանութեան ճանաչման առիթով Թուրքիոյ նախագահ Էրտողանին իր ուղղած նամակով ոտնակոխած է իր գրաւած Ս. Աթոռին ամէնէն հիմնական պահանջներն ու նուազագոյն պայմանները՝ թէ՛ քաղաքացիական, թէ՛ կրօնական հիմքերով:

- Ան ոչ միայն պոլսահայ գաղութը կը ստորնացնէ Թուրքիոյ միւս ազգութիւններու քաղաքացիներուն դիմաց, այլ ամբողջ հայ ժողովուրդին բարօրութիւնը կը դնէ իր նմաններուն ստրուկ մտածելակերպի բովանդակութեան սահմաններուն մէջ: Ան չի տեսներ, թէ պոլսահայութիւնը այլեւս թեւակոխած է քաղաքացիական հաւասարութեան պահանջատիրութեան փուլ՝ «Ակօս», Հրանդ Տինք, «Արմէն» ճամբար:

- Ան չի հետեւիր այլ եկեղեցիներու կրօնապետներուն կեցուածքներուն: Չի տեսներ, թէ Աստուծոյ այլ, բայց իսկական ծառայ մը՝ Վատիկանի Ֆրանչիսկոս պապը, ի՞նչ կեցուածք որդեգրեց ու ի՞նչ յորդորեց Աստուծոյ միւս ծառաներուն եւ երկիրներու իշխանաւորներուն, Հայոց ցեղասպանութեան 100ամեակին առիթով:

- Ան համաշխարհային քաղաքականութեան տեսողութիւնն իսկ չունի: Ո՛չ - թէ Հայոց ցեղասպանութիւնը ճանչցող երկիրները իրենց «կայսերապաշտական» նպատակներուն համար կը գործածեն զայն, այլ իրականութիւնը շատ լաւ գիտցող, սակայն աշխարհաքաղաքական իրենց շահերուն պատճառով տակաւին չճանչցող երկիրները, ինչպէս՝ Միացեալ նահանգներն ու Անգլիան, հակառակ իրենց այդ օրերու Թուրքիոյ մէջ դեսպաններուն ու ցեղասպանութեան վայր նահանգներու հիւպատոսներուն ականատեսի վկայութիւններուն եւ տեղեկագիրներուն:

- Ան չունի նուազագոյն հեռատեսութիւն ու անցեալի փորձի գիտակցութիւն, որ նման կեցուածք իր ծանր հետեւանքները պիտի ունենայ նոյնինքն պոլսահայութեան հաւասարութիւն տենչացող խաւին վրայ: Ամէն անգամ որ Թուրքիոյ աթոռակալները որեւէ տեսակի յարձակում շղթայազերծեն հայութեան դէմ Պոլսոյ մէջ, առաջ պիտի քաշեն այս տեղապահին նամակը (նամակները)՝ որպէս պոլսահայութեան մեծամասնութեան ներկայացուցիչի եւ դատապարտեն հաւասարութեան ձգտողները՝ որպէս նուազագոյն պարագային թրքականութեան վարկաբեկիչներու, իսկ ծայրագոյն պարագային՝ ահաբեկիչներու: Տակաւին չխորանանք այն հետեւանքներուն մասին, զորս թրքական քարոզչական մեքենան հայութեան գլխուն պիտի տեղացնէ աշխարհի տարածքին՝ ի պահանջել հարկին:

- Ան չունի իր Ս. Աթոռին արժանավայել ողնաշար: Եթէ նոյն Ս. Աթոռին պաշտօնավարած պատրիարք Մկրտիչ Խրիմեանը (Հայրիկ), հայ ժողովուրդի կեղեքումի ու հալածանքի դժուարին օրերուն, այն ալ «կարմիր» սուլթան Ապտիւլ Համիտի գահակալութեան շրջանին, տուաւ «Երկաթէ շերեփ»ի իր ազատատենչ քարոզը, այս տեղապահէն, այս պարագային, կ՛ակնկալուէր նուազագոյնը ԼՌԵ՛Լ եւ ո՛չ մէկ արտայայտութիւն ունենալ:

Տեղապահի նամակին իւրաքանչիւր հատուածը ստրկամտութիւն կը բուրէ եւ հայութեան վնասակար է պոլսահայ թէ այլ: Անհասկնալի է նոյնիսկ իր ծուխին ֆիզիքական անվտանգութեամբ «մտահոգ» կրօնաւորի պարագային: Անվտանգութիւնը չ՛ապահովուիր հայ ղեկավարին ծնրադրութեամբ՝ որեւէ երկրի մէջ, որեւէ գաղութի պարագային, ընդհակառա՛կը, այդ արարքը դուռ կը բանայ շարունակական հայավնաս ճնշումներու եւ

պահանջներու: Իսկ ատիկա կատարել մեր ժողովուրդի ցեղասպանին առջեւ՝ այդ արդէն մարդկային նոր նկարագրի կերտում է, ժխտական տարածքի մէջ:

Նման անձերու աթոռներու վրայ գտնուիլը եւ Ս. միւռոնի պաշտպանութիւնը վայելելը արգելք կը հանդիսանան մեր ժողովուրդի իւրաքանչիւր պահանջատիրական քայլին՝ Հայոց ցեղասպանութեան ճանաչում ըլլայ, թէ կորուստներու հատուցում, այլ խօսքով՝ Հայ դատի հայանպաստ վերջնական իրականացումին: Առ այդ, հեռացնել եւ կարգալուծել նմանները:

«Թող Որ Մեր Զաւակները Պատերազմ Չտեսնեն, Այլ Ապրին Խաղաղ Պայմաններու Մէջ». Զոհուած Ազատամարտիկի Այրին

Սալբի Սաղտըճեան

Ապրիլեան պատերազմէն անցած է երեք ամիս: Թէեւ կարծատեւ, բայց անոր ձգած վէրքերը շատ խոռն են ու դառն, յատկապէս անոնց համար, որոնք կորսնցուցին իրենց ամուսինը, զաւակը, տունն ու տեղը:

Կորուստ ունեցած ընտանիքներու շարքին է նաեւ Մուրատեան ընտանիքը: Ապրիլ 8ին, Թալիշի ազատագրութեան կռիւներու ընթացքին, իր վիրաւոր ընկերը փրկելու պահուն նահատակուեցաւ պայմանագրային զինծառայող Հրաչեայ Մուրատեանը: 35ամեայ Աննան կորսնցուց իր ամուսինը, իսկ փոքրիկներ Գոհարը, Արմինէն եւ Սամուէլը դեռ կը սպասեն իրենց հօր տունդարձին:

Երբ 8ամեայ Գոհարին կը հարցնեմ ո՞ւր է հայրիկը, ան կ՚ըսէ, «հայրիկը Թալիշում է, կռւում է թշնամու դէմ, բայց շուտով կը վերադառնայ»: Գոհարը թէեւ գիտէ, որ հայրը զոհուած է, բայց դեռ չ-՚ընկալեր, ինչ ըսել է «զոհուած»: Վեցամեայ Արմինէն կ՚ըսէ՝ «Պապաս զինուոր է, նա հերոս է դառել ու զոհուել է»: Իսկ երկու տարեկան Սամուէլը դեռ չի խօսիր, որ արտայայտէ իր զգացումները:

Հրաչեայ Մուրատեանը եղած է ընտանիքին նուիրուած ամուսին եւ հոգատար հայր: «Իսկական հայկական տղամարդ», այսպէս կը բնորոշէ զինք իր կինը՝ Աննան: «Լաւ ընտանիք էինք կազմել, մեր ամուսնական կեանքի երկրորդ փուլն էինք մտնում, երեխաների դաստիարակութեան, կրթութեան հարցերով պիտի զբաղուէինք, երբ արդէն այս դժբախտութիւնը պատահեց», կ՚աւելցնէ ան:

Հրաչը, մինչեւ պայմանագրային զինծառայող արձանագրուիլը, աշխատած է տարբեր գործեր հոգալու համար ընտանիքին ծախսերը: Մէկ տարի առաջ որոշած է անցնիլ զինծառայութեան: Ան յաճախ նշած է, թէ տարբեր աշխատանքներ ընելէ ետք, վերջապէս գտած է իրեն հոգեհարազատ գործը՝ հայրենիքի պաշտպանութեան նուիրական գործը:

Հրաչը մեծ պատասխանատուութեամբ մօտեցած է իր աշխատանքին: Երբ բարձրացած է Օմարի լեռներու վրայի դիրքերը, ամէն ինչ իրեն համար այլ բնոյթ ունեցած է, այնտեղ կեանքի ընկալումը ուրիշ եղած է Հրաչին համար: «Երբ դիրքերէն վար կը նայիս մեր գիւղերու վառուող լոյսերուն, կը զգաս՝ այդ գիւղերուն ապահովութիւնը, զանոնք պաշտպանելու պարտականութիւնը քու վրադ է: Մէջդ մեծ պատասխանատուութիւն կը զգաս Հայրենիքիդ եւ ժողովուրդիդ նկատմամբ», յաճախ ըսած է Հրաչը:

Ապրիլ 2ին դիրքերէն պէտք էր վերադառնար տուն, բայց նոյն օրը կը զանգէ ու տեղեակ կը պահէ, որ ինք պիտի ուշանայ: Ընտանիքը ուշանալուն պատճառը չէր գիտեր: Յետոյ անոնք կ՚իմանան, թէ Արցախի սահմաներուն վրայ բուռն մարտեր տեղի կ՚ունենան:

«Վերջին անգամ որ խօսեց, կարծես հրաժեշտի խօսքեր էր ասում, որ մենք մեզ լաւ նայենք, եւ այլն: Բայց ես չէի հասկանում: Վերջին օրը, ամսի 7ին, մօրն էր զանգել, որով այդ օրը մայերու օր էր: Իսկ ինձ չէր հասցրել զանգել: Յետոյ իմացանք, որ նա մասնակցել է Թալիշի ազատագրութեան կռիւներին եւ նոյն Ապրիլ 7ի գիշերը նահատակուել», յուզուած կը պատմէ Աննան:

Կը հարցնեմ իրեն, «կ՚ուզե՞ս տղադ ալ ծառայէ»: «Որպէս մայր, չեմ ուզի զաւակս վտանգի ենթարկուի, բայց որպէս հայ կին, պիտի հայրենասիրական ոգով դաստիարակեմ իրանց: Անշուշտ շատ կ՚ուզէի, որ այս պատերազմը աւարտուի: Մեր եւ մեզնից առաջուայ սերդին պէս մեր երեխաները էլ պատերազմ չտեսնեն, ալ նահատակներ չտանք ու մեր ազգը բազմանայ եւ բարգաւաճի», կ՚ըսէ Աննան, ընդգծելով, որ ինք իր զաւակները հայրենասիրական ոգիով պիտի դաստիարակէ, որ անոնք հպարտ ըլլան Հայրենիքին համար իր կեանքը զոհած իրենց հօրմով: :

Նահատակ Հրաչեայ Մուրատեան կնոջ՝ Աննայի եւ զաւակներուն՝ Գոհարի, Արմինէի եւ Սամուէլի հետ:

Հրաչին աւագ աղջիկը, երբ մեծնայ կ՚ուզէ նոտար դառնայ, որովհետեւ իր հօր հետ այդպէս որոշած են: «Հիմա չգիտեմ ինչ է նոտարը, բայց անպայման կ՚իմանամ: Արմինէն ակնաբոյժ, իսկ Սամուէլիկը դատախազ է դառնալու», կ՚ըսէ ան:

Հրաչի ընտանիքը այժմ կ՚ապրի նիւթական դժուար պայմաններու մէջ: Օգնութեան ձեռք մեկնողներ կ՚ըլլան, կ՚ըսէ Աննան ու կ՚աւելցնէ՝ «Գիտեմ, որ ժամանակի ընթացքին ես իմ մէջ ուժ կը գտնեմ եւ կը յաղթահարեմ առանց Հրաչին ապրելու դժուարութիւնը, եւ կը կարենամ ոտքի կանգնել: Թէեւ հիմա օգնողներ կան, օգնութիւն առաջարկողներ, բայց դա ժամանակաւոր է, պէտք է ես կարենամ ոտքի կանգնել ու պահել երեխաներիս»:

Հայրենիքի պաշտպանութեան մարտերուն շատ-շատերու նման ինկաւ նաեւ Հրաչը: Մուրատեան ընտանիքը կորսնցուց իր տան սիւնը, սակայն հայրենիքը իր սահմաններու ամրութեան համար տուաւ նահատակ մը եւս: Պատերազմը թէեւ վերջ չէ գտած, բայց Աննայի նման բոլորիս ցանկութիւնն է, որ մեր զաւակները եւ յաջորդ սերունդները ապրին խաղաղ պայմաններու մէջ, հայ ազգը այլեւս զոհեր չտայ, այլ իր հողերուն վրայ բարգաւաճի ու բազմանայ:

«Հայրենիքը Միայն Կռուելով Չեն Պաշտպաներ, Այլեւ՝ Այնտեղ Ապրելով». Բերձորի Անդրանիկ

Կարինէ Աւագեան

Իսկական հերոսները չեն խօսիր, կը խուսափին խօսելէ իրենց գործած սխրանքներուն մասին, իսկական կռուողները միայն կը կռուին, իսկական հայրենասէրները ամպագոռգոռ խօսքեր չեն ըսեր Հայրենիքի մասին. անոնք պարզապէս կ՚ապրին Հայրենիքի մէջ, Հայրենիքի համար եւ հարկ եղած պարագային՝ կը պաշտպանեն իրենց տան սահմանները:

Անոնցմէ մէկն ալ Սուրիա ծնած, Լիբանան ապրած եւ Արցախ հաստատուած Անդրանիկ Չաուշեանն է՝ Բերձորի Անդրանիկը, որուն հետ զրուցելուս հիացայ անոր համեստութեամբ, զսպուածութեամբ, իսկական հայրենասէրին բնորոշ պատրաստակամ մարտունակութեամբ եւ աննահանջ ոգով ու կամքի գերհզօր դրսեւորման յամառութեամբ, որով ալ ան, մարտի դաշտէն դուրս, նաեւ կռիւ կու տայ Արցախի մէջ իրեն բաժին հասած հողակտորին հետ:

«Չեմ սիրեր խօսիլ ապրիլեան պատերազմի օրերուն իմ եւ ընկերներուս կատարած գործողութիւններուն մասին, որովհետեւ ատիկա մեր բոլորին պարտքն է. Հայրենիքը բոլորինն է: Ծնած ու մեծցած եմ Սուրիա, մինչեւ պատանեկան տարիքս ապրած եմ իմ ծննդավայրիս մէջ, յետագային՝ տեղափոխուած Պէյրութ, երկու տարի առաջ եկած եմ Երեւան, այնուհետեւ մեկնած Արցախ ու հաստատուած այնտեղ: Մինչ այդ բարեսիրական գործերով եկած ենք Արցախ եւ մտածած եմ՝ ինչո•'3fu ոչ, պէ՛տք է գամ ու բնակիմ նո՛յն Արցախի մէջ: Հայրենիքը միայն կռուելով չեն պաշտպաներ, այլեւ՝ այնտեղ ապրելով: Պէյրութի մէջ ես «Արցախ» հիմնադրամի անդամ էի, Քաշաթաղի վերաբնակեցման ծրագիրը կ՚ընէինք: Ինծի համար կարեւոր չէր, թէ ուր պէտք է ապրիմ Հայաստանի ու Արցախի մէջ. ինծի համար բոլոր քաղաքները, մարզերն ու գիւղերը հարազատ են, Հայրենի՛ք են. ուր՝ հայ, այնտեղ ալ՝ ես, եթէ իմ ժողովուրդս վատ կ՚ապրի, ուրեմն ՝ ես ալ վատ կ՚ապրիմ, եթէ լաւ կ՚ապրի, ես ալ լաւ կ՚ապրիմ: Կինս հայաստանցի է, ղարաբաղցի. Հայաստանի մէջ ամուսնացանք, մէկ տարի կնոջս հետ ապրեցանք Պէյրութ, յետոյ եկանք Հայաստան ու գացինք Արցախ: Հրաշալի բնութիւն, հրաշալի մարդիկ, ասիկա՛ ես տեսած եմ Արցախի մէջ: Քու հայրենիքիդ որ տարածքին մէջ ալ ապրիս, պէտք է պայքարիս՝ պահպանելու հայկական ինքնութիւնդ, աւանդոյթները, մշակոյթը: 12 տարիէն աւելի ծառայած եմ եկեղեցւոյ մէջ, եղած եմ սկաուտական շարժման շարքերուն մէջ: Ուր հայ համայնքէն ներս կարիք կար աշխուժցնելու աշխատանքները, մենք այդտեղ էինք: Հայաստանի, Արցախի ժողովուրդը աւելի գործնական է, եւ ստիպուած են ըլլալու այդպիսին՝ շրջապատուած ըլլալով թշնամի երկիրներով: Մէկ տարի եւ 4 ամիս է, որ ընտանիքիս հետ Արցախի մէջ եմ՝ Բերձոր. աղջիկ մը ունիմ՝ Քնարիկս, միւսն ալ՝ Աւետիս որդիս (հօրս անունով կոչած ենք) ծնաւ, երբ ես դիրքերու մէջ էի. Կ՚ուզէին տղաները զիս համոզել, որ երթամ, սակայն չգացի, չէի կրնար ձգել ընկերներս ու դիրքերը, եւ այդ ժամանակ առաւել եւս պարտաւորուած էի մնալու առաջնագիծին վրայ. ես կը պաշտպանէի նաեւ իմ որդիս ու անոր Հայրենիքը:

Բերձորի Անդրանիկ եւ իր նորածինը

Մինչեւ դիրքեր երթալս ալ իմ տնեցիներս, ծանօթներս ինծի կը համոզէին չերթալ, քանի որ երեխայի ծնելուն շատ քիչ մնացած էր, սակայն ես չէի կրնար մնալ տունը ու համբերել, երբ առաջնագիծին ջահել զինուորներ կը զոհուէին, երբ նենգ թշնամին նշանառութեան տակ առած էր մեր սահմաններն ու մեր գիւղերը: Խումբ կազմուեցաւ. եթէ չկազմուէր ալ, միեւնոյնն է, ես որոշած էի երթալ անհատապէս՝ ոտքով, իմ մեքենայով ...ինչպէս պատահէր:

Ռազմական փորձառութիւն ունիմ, որովհետեւ 2,5 տարի ծառայած եմ լիբանանեան բանակին մէջ: Պէյրութ պատերազմ տեսած երկիր է, ես ալ, ըլլալով այնտեղի բնակիչ, բոլորին նման զէնք ունէի, միշտ պատրաստ՝ պաշտպանելու ընտանիքս, տունս:

Արցախի մէջ, առաջնագիծ երթալուս, միայն կը մտածէի կռուելու եւ յաղթելու մասին. մեր բոլոր տղաները այդպէս տրամադրուած էին. մենք նապաստակ չենք, որ փախչինք: Եթէ ազերիներուն կողմէ առաջին շարքերուն մէջ կը

շար. տես. էջ 29

Ծովը Խլեց Սուրիահայ Աղջկան Ընտանիքը, Իսկ Անոր Փրկօղակը Հայաստանը Դարձաւ

Ջուլիետա Մաթեւոսեան

Սուրիահայ Թէքէեաններու ընտանիքին պատմութիւնը անցեալ տարի յուզեց շատերը: Օրեր, շաբաթներ շարունակ մեր հերոսուհի Սէրլի Թէքէեանը սպասեց՝ յոյսով, որ կը վերագտնէ ընտանիքը...աւաղ, յաջողեցաւ փրկուիլ միայն քոյրը՝ Արինան...

Իսկ պատմութիւնը սկիզբ կ'առնէ Սասունէն ու Անյթապէն, ուրկէ ալ կը սերին Սէրլիի հայրական ու մայրական կողմերու մեծ հայրերը: Ցեղասպանութիւնը վերապրած շատ հայորդիներու նման անոնք եւս ապաստան կը գտնեն Սուրիոյ մէջ, այնտեղ կը կառուցեն իրենց նոր բոյնը: 18ամեայ Սէրլիի ընտանիքին մէջ բոլորը արուեստի հանդէպ մեծ սէր ունէին: Հայրը կիթառի խումբ ունէր Սուրիոյ մէջ, մայրն ալ դաշնակահարուհի էր. վերջին տարիներուն, երբ ընտանիքը Սուրիայէն Լիբանան տեղափոխուեցաւ, կը դասաւանդէր Պէյրութի Համազգային դպրոցէն ներս:

Միայն թէ Սէրլիի միտքը անընդհատ Հայաստանի հետ էր, ու անցեալ տարուան Ապրիլին եկաւ Երեւան՝ մեծմօր ու քեռիին մօտ: «Ինծի Երեւան բերողը Աստուած էր, Երեւանը ինծի համար աշխարհի կեդրոնն էր կարծես», յիշելով մէկ տարուան վաղեմութեան դէպքերը՝ «Հայերն այսօր»ին կը պատմէ Սէրլին:

Մինչ Սէրլին կը հաստատուի Երեւանի մէջ, կը յաճախէ դպրոց ու նոր ընկերներ ձեռք կը բերէ, ընտանիքը՝ հայրը, մայրը, մեծմայրը, 19ամեայ քոյրն ու 10ամեայ եղբայրը, կ'որոշեն Պէյրութէն նաւով հասնիլ Թուրքիա, յետոյ՝ Յունաստան որպէսզի այնտեղէն ալ տեղափոխուին Գերմանիա՝ Սէրլիին մօրաքրոջ մօտ: Այս ընտանիքին, ցաւօք, միասին ըլլալ վիճակուած չէր: Թուրքիայէն Յունաստան ճանապարհին նաւը կը խորտակի, եւ Սէրլիի ընտանիքին 4 անդամները կը խեղդուին՝ մայրը, հայրը, մեծմայրն ու 10ամեայ եղբայրը: Կը փրկուի միայն քոյրը՝ Արինան, որ 4 ժամ լողալէ ետք կը հասնի Իզմիր, եւ այսօր քրոջ հետ միասին կ'ապրի Երեւանի մէջ:

Այդ ծանր օրերու ապրումներուն մասին խօսելու ատեն՝ Սէրլին չի կրնար թաքցնել յուզմունքը, բայց նոյնիսկ այդ պարագային անոր աչքերուն մէջ սէրը կը խօսի, եւ ոչ դառնութիւնը: Ի դէպ, Սէրլին իր անունը նոյնի այդպէս ալ կը մեկնաբանէ՝ սիրով լի...

«Այսքան կորուստներէ ետք կը հասկնաս, որ միայն «մարդ» ըլլալով՝ անհնար է խաղաղութիւնը վերապրիլ, պէտք է նաեւ աստուածայինը, վերերկրայինը...հաւատքն է, որ կը փրկէ զիս», կ'ըսէ 18ամեայ հայուհին, որ այդչափ փորձութիւններու մէջէն անցնելէ ետք ալ լի է կենսուրախութեամբ, Հայրենիքի հանդէպ սիրով ու ապագայի ծրագիրներով: Սէրլին այս տարի աւարտեց դպրոցը ու կը մտածէ ձեւաւորող դառնալու մասին: Դեռ չէ որոշած, որ համալսարանը դիմէ, բայց, համոզուած է՝ ինչ ուղի ալ ընտրէ, Հայրենիքի ու արուեստի հանդէպ սէրը պիտի չփոխուիր:

Թեքէեան ընտանիքը նախքան աղիտալի դէպքը, երբ ծնողներն ու մանչը կորան ծովուն մէջ:

«Պարը...» ...

շար. 3րդ էջէն

ջիկներուն ճշգրիտ շարուածքն ու համաչափ քայլերը կը տպաւորեն մեզ: Յունաստանէն՝ Սպանիա. բեմի վրայ է Էրեբունիի պարողներէն Լանա Տէր Պետրոսեանը, որուն կրքոտ ու հրապուրիչ սպանական ֆլամենքօ պարը ալ աւելի այլազանութիւն կը բերէ յայտագրին:

Կարելի չէ չխանդավառուիլ Ուքրանական «Հոբաք»ով. պուպրիկի նման հագած աղջիկներուն ցայտուն գլխարկներէն մինչ տղոց մէջքի կապերն ու կարմիր կօշիկները՝ հէքիաթներու աշխարհէն փրցուած էջ մը ըլլար կարծես այս պարը: Հէքիաթէն կ'անցնինք դիւցազուններու երկիրը՝ Արցախ. մեր հերոսներուն նուիրուած «Արտաշատ»ը կը թնդացնէ բեմը «Էրեբունի»ի եւ մեծերու խումբին հոյակապ կատարումով: Արցախէն «Հայաստան»՝ փոքրերու Գ. Խումբի եռանդուն պարն է, որմէ ետք այնքան նուրբ ու ծաղկաւէտ՝ Էրեբունի պարախումբի աղջիկներն ու մեծերը մէկական «Ծաղկած Բալենի» որպէս, մեղմ երաժշտութեան ու նոյնքան մեղմ վարդագոյնով ծածկուած՝ գեղեցիկ պատկեր մը կը կազմեն: «Քոչարի»ն դարձեալ ոտքի կը հանէ բոլորը. «Էրեբունի»ի տղոց խանդոտ ու կրակոտ պարին կը յաջորդէ փակման պարը ու ահա բոլորը՝ խումբ առ խումբ՝ ձեռք ձեռքի իր գագաթնակէտին կը հասցնեն այս պանծալի երեկոն:

Սրահը ոտքի է. ծափերը երկար կը շարունակուին: Դէմքի արտայայտութիւնները, ինքնավստահ քայլերը ու հեզասահ ու համաչափ կատարումը պարերուն որոնց մեծամասնութիւնը բեմադրութիւնն է նոյնինքն Լոռի Նաճարեանի՝ մեծապէս ոգեւորած է ներկաները: Երկարամեայ պարողներէն՝ Յովհաննէս Յարութիւնեան ծաղկեփունջով կը յառաջանայ դէպի Լոռի. վերջինը խօսք կ'առնէ շնորհակալութիւն յայտնելով բոլորին, եւ կը բաժնէ Սեպտեմբերէն սկսեալ պարարուեստի ուղղութեամբ ուսումը հայրենիքի մէջ շարունակելու իր որոշումը: Գլաձոր մասնաճիւղի ատենապետ՝ Մեղեդի Էթիեմեզեան վեր առնելով Լոռիի արժանիքները, բծախնդիր, անձնուէր ու անսակարկ մօտեցումը, Գլաձոր մասնաճիւղին կողմէ յուշանուէր մը կը յանձնէ իրեն, մաղթելով նորանոր վերելքներ: Ան նաեւ, բարձր գնահատելով վեց տարիներու վրայ երկարող պարտաճանաչ, հետեւողական, անշահախնդիր ու անխոնջ կամաւոր աշխատանքը, յուշանուէր մը նաեւ կը յանձնէ պարի յանձնախումբի վարչական ներկայացուցիչ՝ Ալին Տօնապետեան-Թոսունեանին: Աւարտին, Տէր Կոմիտաս Աւագ Քահանայ Փանոսեանի շնորհաւորանքի ու քաջալերանքի սրտի խօսքով ու պահպանիչով իր աւարտին կը հասնի յիշատակելի ելոյթը:

Վեց տարիներու վրայ երկարող վերելք՝ շնորհիւ Լոռի Նաճարեանի որակաւոր ուսուցման, գեղարուեստական բարձր ճաշակին: Հետեւողական, տքնաջան աշխատանք՝ Համազգայինի «զինուորներուն» կողմէ: Տիտանական նախաձեռնութիւն. շնորհաւորելի են Լոռին, վարչութեան եւ յանձնախումբի անդամները, օժանդակները, ծնողները, նուիրատուները ու ի վերջոյ՝ եւ ի մասնաւորի՝ 150է աւելի պարողները, Ուսումնարանի փոքրերէն մինչ Էրեբունիի տղաքն ու աղջիկները: Հպարտութեան զգացումներով հրաժեշտ կու տանք սրահէն, լաւագոյնը մաղթելով Լոռիին եւ քաջ գիտնալով, որ Համազգայինը պիտի շարունակէ իր առաքելութիւնը եւ մօտ ապագային, նոր ղեկավարի ճամբով հայ պարը դարձեալ ներկայութիւն պիտի դարձնէ մեր բեմերուն վրայ: Քանզի, Լոռիին իսկ բառերով՝ հայ պարը մշակութային գանձ է, որուն արժէքը ամէն հայ պէտք է իմանայ. գանձ՝ որ պէտք է պահպանէ եւ տարածէ: Լուսաշող ճանապարհ՝ Լոռիին. ոյժ ու կորով՝ Համազգայինին: Մեր պարը յաւերժ է մեր լեռներուն պէս:

Join us
www.facebook/
Torontohye newspaper

Dr. Jackie Ani Hasserjian's Family Dental Office

Dr. **Jackie Ani Hasserjian** is pleased to announce the addition of Dr. **Krikor Bebedjian** to her dental practice as an associate dentist beginning July 4th, 2016. Dr. Bebedjian will be providing comprehensive general dental care, and we look forward to having him join our team.



Dr. Bebedjian graduated from the University of British Columbia, Faculty of Dentistry with a Doctor of Dental Medicine (DMD) degree. During his scholarly career at UBC, Dr. Bebedjian was the recipient of the **Graduating Class of Dentistry 1974 Prize** and the **B.C. Society of Orthodontics Charles C. Craig Memorial Scholarship** for obtaining the highest academic standings in the Endodontics and Orthodontics Modules. In addition, he was honoured with the prestigious **Dr. Juan Tobias International Scholarship**.

Dr. Bebedjian has also received his Master of Science degree in Operative Dentistry from the Yerevan State Medical University, and Doctor of Dental Surgery (DDS) degree from the University of Aleppo.

NEW PATIENTS WELCOME!

#305 - 1110 Sheppard Ave. E., Toronto (Near Leslie Station)



Phone: **(416) 221-7300** Email: **dr.hasserjian@bellnet.ca**

Find us on Facebook

ԽԱՉՎԵՐԱՅԻ ԵՒ ՄՈՒՍԱԼԵՐԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՅԻՇԱՏԱԿՈՒՄ

ARMENIAN HERITAGE CELEBRATION



KHOREN MOURADIAN

KOKO ASAYAN

SATURDAY SEPTEMBER 10, 2016 **$20**

Շաբաթ Մատաղօրհնէք ժամը *6:00 pm*
Խրախճանք ժամը *8:00 pm*

KIDS AGES 10 AND UNDER ARE *FREE*

SUNDAY SEPTEMBER 11, 2016 **FREE**

Կիրակի-Պատարագ ժամը *11:00 am*
Հերիսայի Օրհնութիւն ժամը *1:00 pm*

Մեծ Վրանի Ներքեւ

Համադամ ճաշ
Հաճելի Մթնոլորտ
Աւանդական "Տաուլ Զուրնայ"
Փոքրերու խաղավայր

ARMENIAN COMMUNITY CENTRE
15 INTERNATIONAL VILLAGE DRIVE, CAMBRIDGE

I·D·A®

CASSANDRA HEALTH CENTRE

ARMENIAN
MEDICAL CENTRE & PHARMACY

Vartan *(PharmD, RPh)*, **Sarkis** *(BScPhm, RPh)* & **Maral Balian** *(PharmD, RPh)*

Dr. Rupert Abdalian
Gastroenteology

Dr. Mari Marinosyan
Family Physician

Dr. Omayma Fouda
Family Physician

Dr. I. Manhas
Family Physician

Dr. H. Kavazandjian
Family Physician

Physioworx Physiotherapy

Դեղագիրներու պատրաստութիւն՝ շաբաթական յատուկ տուփերու մէջ:

Արեան ճնշման քննութիւն եւ հետեւողականութիւն՝ անվճար:

Շաքարախտի քննութիւն:

Դեղերը իրենց հասցէներուն առաքելու անվճար սպասարկութիւն:

Տարեցներու 10% զեղչ:

Կը յարգենք եւ սիրով կը կատարենք բոլոր ապահովագրական ընկերութիւններու պայմանները:

Walk - in Clinic բաց է շաբաթը 6 օր: Կրնաք բժիշկները տեսնել առանց ժամադրութեան:

WALK-IN CLINIC ONSITE

416-331-9111

Դիմեցէք մեզի եւ պիտի դառնաք մեր մնայուն յաճախորդը

2030 Victoria Park Ave. (south of Ellesmere)
North York, ON M1R 1V2

Tel: 416-449-2040
Fax: 416-449-2048

DR. MARI MARINOSYAN
Family Doctor

Accepting New Patients

Located at Cassandra Health Centre
2030 Victoria Park Ave.
Please call 416-331-9111
to arrange an appointment

HomeLife
Higher Standards
Home Life/Vision
Allen
Der Minassian
Sales Representative
allendm@gmail.com
www.derminhomes.com
Call 416-939-1851 for a
FREE Market evaluation of your home.

HomeLife
Higher Standards
HomeLife/Vision
Realty Inc.-Brokerage* - Realtor Member
*Independently Owned and Operated
Seda Bakhshiyan
Sales Representative
Cell: (647) 779-3660
Bus: (416) 383-1828
sedabakhshiyan@gmail.com
www.propertyca.ca


Dr. Anet Biuss D.D.S
Markham Dental Solutions
New Patients Welcome
Crowns and Bridges
Veneers
Implants
Extractions
Root Canal Therapy
Mercury Free Fillings
Denturs
Teeth Whitening
Invisalign
Tel.: 905 475 7600
Fax: 905 475 4075
www.markhamdentalsolutions.com
18 Crown Steel Dr, Suite 109 Markham Ontario L3R 9X8


Գիտէ՞ք թէ
Թաղման ծախսերը գրեթէ նոյնն են
եւ կախեալ՝ ընտանիքի
կատարած ընտրութենէն
R.S.KANE
FUNERAL HOME
Բարեւ « ես ճոն Քէյնն եմ՝ R.S.Kane Funeral Home-ի նախագահը:
Եթէ յաւելեալ օգնութեան պէտք ունիք « խնդրեմ կապուեցէք մեզի հետ
Հեռ. 416-221-1159 Կամ e-mail: info@rskane.ca

ԱԼՏՈՒԱԼԻՐ
ԵՐԺԱՊՏՈՅՏ
Montenegro
Croatia
Italy
Altima Tours & Charters Ltd.
Օգոստոս 25էն Սեպտեմբեր 8
Տեղերը սահմանափակ են
Մանրամասնութեանց համար դիմել՝
Բեննա Թարզիին
416-494-4067 կամ 416-496-0606

LEBANESE CUISINE مطعم دنيا مأكولات عربية و لبنانية

DOUNIA RESTAURANT

Armenian establishment

Now open

Great variety of
appetizers & Meat dishes

Ճաշակեցէք հայկական այս հաստատութեան համեղ ճաշատեսակները

1331 Warden ave. Unit 1,
scarborough Ont. M1R 5A8

Warden & Ellesmere (near Costco)

we cater & deliver

647-342-9271 / 647.402.3003

ARMENIAN HERITAGE CRUISE® XX 2017

The Armenian Cultural Association of America

ARMENIAN HERITAGE CRUISE 20th ANNIVERSARY

Presents its 20th Anniversary Cruise

www.armenianheritagecruise.com



JANUARY 20-29, 2017
Departing from Miami, Florida. With live entertainment by Kev Orkian, Kevork Artinian, Harout Khatchoyan, Joseph Krikorian and more . . .
From the Columbia University Medical School, a first for the AHC, a Medical and Health Care Professionals Accredited Educational Program.

Government Taxes of $94.84 are in addition. All rates are per person based on double occupancy and include all Port Charges and ACAA registration fees. Rates and information subject to change at any time without notice.

RoyalCaribbean INTERNATIONAL

INSIDE CABIN	starting at $1074
PROMENADE INSIDE	$1144
OCEAN VIEW	starting at $1204
DELUXE BALCONY	starting at $1544
SUPERIOR BALCONY	starting at $1604
SUITES AVAILABLE UPON REQUEST	
3rd or 4th person or child OVER 11 sharing same cabin	$849
3rd or 4th child UNDER 11 sharing same cabin	$549

TRAVELGROUP INTERNATIONAL

You must book with TravelGroup in order to attend all private Armenian Events. For Reservations Contact:
125 SE Mizner Blvd., SUITE 14, Boca Raton, FL 33432
Local **561-447-0750** • Toll Free **1-866-447-0750** Ext 108 or 102 • AHC@travelgroupint.com

Michigan Governor Rick Snyder Signs Law Mandating Teaching Armenian Genocide in Public Schools

On June 27, Michigan Governor Rick Snyder signed into law HB4493 mandating the teaching of the Armenian Genocide and Holocaust (as well as other genocides) in Michigan public schools. This new law recommends a total of six hours devoted to the teaching of genocides at some point within grades 8 to 12.

Both the Armenian and Jewish communities of southeastern Michigan combined their grassroots efforts to advance this bill.

The official signing of this law took place at the Holocaust Memorial Center located in Farmington Hills, Michigan. Several members were present from the Armenian National Committee of Michigan that were instrumental including Lara Nercessian (Chair, ANC of MI), Raffi Ourlian, Ara Topouzian, Hayg Oshagan, Helena Bardakjian, Shant Jamgotchian, Toros Chopjian, Ani Attar and Hovig Kouyoumdjian.

The ANC of Michigan worked alongside with the Armenian Genocide Education Committee, led by Edward Haroutunian. Other committee members included Gregory Dildilian, Father Hrant Kevorkian and Father Shant Barsoumian.

"This is an extremely important day for our ancestors. After over a hundred years, the children in Michigan will learn about all forms of Genocide, especially the Armenian Genocide and Jewish Holocaust. They say history can repeat itself if we do not learn from it, hopefully the children of the future will learn and understand so as never to see such violent crimes against humankind again," said Lara Nercessian, Chairperson of the Armenian National Committee of Michigan.

HB4493 is co-sponsored by Rep. Klint Kesto (Mich.-39). Kesto is a long-time friend of the Armenian National Committee of Michigan, where in April 2015, he cosponsored the House Resolution (HR-61) commemorating the 100th anniversary of the Armenian Genocide.

Michigan Governor Rick Snyder signed into law HB4493 mandating the teaching of the Armenian Genocide and Holocaust (as well as other genocides) in Michigan public schools.

"It has been an honor to work with the Jewish and Armenian communities as we advanced this legislation. In a time when Genocide is occurring now in the Middle East, we must make every effort to ensure our youth are taught the history of genocide so they may understand the world around them now, and have the skills to prevent future genocides," said Kesko.

Governor Snyder will appoint a 15-member genocide education panel, which is also required by this new law.

Italy approves bill criminalizing Holocaust, statements that deny genocide

Italy's Parliament approved a bill making spreading Holocaust denial illegal.

The bill, which adds to an existing anti-racism bill, was approved Wednesday evening by the lower assembly of the Parliament, the Chamber of Deputies, by a vote of 237-5, with 102 abstentions.

The new law would pursue those who deny genocide or crimes against humanity, using the definition by the International Court of Justice, according to the German news agency DPA. Those convicted could face prison terms of two to six years.

The measure punishes ideas "based entirely or partly" on negationist ideology only when "there is a real danger of their dissemination," according to DPA.

French Parliament Unanimously Approves Criminalizing Armenian Genocide Denial

French members of parliament voted unanimously July 1st to criminalize the denial of all crimes against humanity, including the denial of the Armenian Genocide, reported Agence France Presse.

The amendment, passed on the first reading, sets out penalties of up to a year in prison and a 45,000-euro ($50,000) fine for those who fail to observe it.

Last month, the German parliament voted to recognize the Armenian Genocide, while last week while visiting Armenia, Pope France, reiterated the Vatican's recognition of the Armenian Genocide.

The French amendment, which must now go to the upper house Senate for approval, was a promise by President Francois Hollande during his 2012 electoral campaign.

An earlier law against Armenian Genocide denial was struck down by the country's constitutional court for obstructing freedom of speech.

The new legal project covers all events which French law deems to be genocide, crimes against humanity, war crimes or slavery. Currently, French law only bans Holocaust denial.

"This text will punish the challenge or the trivialization of all crimes against humanity and war crimes," said Ericka Bareigts, the junior minister in charge of equality was quoted as saying by the AFP. She said that included the Armenian Genocide.

"This is one of the greatest days of my political career," enthused Henri Jibrayel, a member of parliament whose ancestors were Genocide survivors.

The new law's backers hope to see it enter into force before the end of the year.

Teaching of Armenian Genocide might be included in Germany's educational program

The inclusion of the Armenian Genocide subject in Germany's educational program is being discussed, Anto Aznavurian – Head of the Armenian National Committee of Germany told ARMENPRESS.

"The Armenian Genocide is not fully presented in school books of Germany. Currently the inclusion of the subject is being discussed. This will contribute [to the awareness] that representatives of different nations – including [those with a] Turkish heritage, living in Germany, will know the truth and will have a clear perception of what actually happened", Aznavurian said.

Aznavurian stated that a similar attempt was made previously – a pilot program was implemented in the state of Brandenburg, Germany.

"We want this experience to expand throughout the entire Germany, and to include the Armenian Genocide in school books. I think the Bundestag's adoption of the Armenian Genocide recognition resolution will contribute to this program," Aznavurian added

On June 2 the German Bundestag adopted the "Remembrance and Commemoration of the Genocide of Armenians and other Christian Minorities in 1915 and 1916" resolution.

Your Most Reliable Transportation Partner
To/From Armenia & Worldwide

- Ocean, Air & Land Int'l Transportation
- Door to Door Services Available
- 20', 40', LCL and Break-Bulk
- Insurance Coverage
- Export Documentation, Letters of Credit Handling and Banking Negotiations
- Dedicated Agency Network Worldwide

METRAS
SHIPPING & FORWARDING INC.
2175 Sheppard Ave. E.
Suite 215 Toronto ON, M2J 1W8
Tel.: 416-497-0377
Fax: 416-497-0783
info@metrasshipping.com
www.metrasshipping.com

Ara Graphics

Babes and Bellinis...

By Talyn Terzian Gilmour

Once again I'm reminded that Bellinis on Monday nights are exclusively for the twenty-somethings…and I'm not one. Why is it when you no longer have to carry around a fake ID card and can have access to all the alcoholic drinks you want at any time and virtually anywhere your body is the one that flat out says "no"?

Last night it was my best friend's birthday. This particular friend is full of spontaneity: perhaps it's because she's also married to a Mr. Mocinho of her own (nice or good guy in Portuguese) and so she can afford spontaneity. In any case, she is always up for a quick jaunt out – be it a coffee date, manicures, dinner and a movie and this time, drinks!

So on this particular Monday night, at Ms. Spontaneous' request, we all agreed to ditch kids and hubbies, work and responsibilities and meet up for bellinis, a glorious concoction of ice and alcohol, in other words, a grownup popsicle – it was girls night out! I felt like I was back to my university days; drinks after a stressful exam well written or better yet, drinks for the sake of drinks. Better yet, "Thirsty Thursday" drinks – those random, raging gatherings that would often go well into the wee hours of the morning from which I'd have to do the quickest bounce-back so that I could function the following day as if the night before never happened.

Only it did. Only the bounce-back never came. Only I'm no longer a twenty-something.

Perhaps the conversation over the evening should've been the hint – rather than discussing boys or school subjects, we discussed all matters of religion, child rearing, construction and careers. Rather than ordering that tipping point round, we thought better of it, cut the night prematurely and decided that at least 6 or 7 hours of sleep would be better than walking home.

No, I'm no longer a twenty-something. And I'm ok with that. With one more school year behind us, my rearview mirror is becoming full…

When I first starting writing this blog, the now double-digit 10 year old (actually, nine and just two days shy of 10 at time of writing!) was six and I was (as usual) complaining, rather, acknowledging just how cold my behind would get sitting rink-side while I waited for him during his hockey practice. My recent senior kindergarten graduate had only just turned two years old and had yet to make his debut in his mother's ramblings.

Just two days ago, I convinced Mr. Niceguy and the boys to walk down the street from my parents' house to a garage sale. I love garage sales. I find them so fascinating; just like I find playing with neighbourhood kids on the street a true privilege – something taken totally for granted in a peaceful, rule-driven, democratic country; growing up an ex-pat in Saudi Arabia I never experienced either.

Walking through garage sales I like to imagine the kind of life these articles for sale actually had...and their owners: a lamp manufactured not in China but somewhere in Canada; a chair that came over on steamship from a great wood worker in England; and would I find that one piece of buried treasure? When my soon-to-be-10 year old bought me my very first present out of his own volition, with his own money, through no prompting of any sort – he created that treasure.

